ՀԱՎԵԼՎԱԾ N 4

# ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

1. Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի (այսուհետ՝ ամենամյա ծրագիր) մշակման և իրականացման օրենսդրական հիմքը Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությունն է (այսուհետ՝ զբաղվածության ռազմավարություն) և «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել ՀՀ վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 1231-Ա որոշման պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015-2017 թթ միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված գերակայությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ Հեռանկարային զարգացման ծրագիր), որի հիմքում դրված չորս գերակայություններից որպես առաջին մատնանշվում է զբաղվածության ընդլայնումը:

2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով կյանքի է կոչվել զբաղվածության ռազմավարության մեջ սահմանված թիրախներին համահունչ զբաղվածության քաղաքականության նոր մոդելը, ինչը հնարավորություն կտա 2015 թվականին զբաղվածության ոլորտում իրականացնել ճկուն, արդյունավետ և իրավիճակից բխող՝ մարտահրավերներին արագ արձագանքող քաղաքականություն:

Զբաղվածության պետական քաղաքականությունը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին) և իրականացնում ամենամյա ծրագրի միջոցով՝ համագործակցելով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց հետ:

2. Ամենամյա ծրագրի նպատակն է՝

1) բնակչության կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

2) աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր աշխատատեղերի ստեղծմանն ու համալրմանն ուղղված միջոցառումների իրականացումը, աշխատաշուկայի կարիքներին արագ արձագանքումը.

3) ըստ նախապես սահմանված առաջնահերթությունների՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովումը:

3. Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2008-2013 թթ բնակչության զբաղվածության, տնտեսական ակտիվության և իրական գործազրկության մակարդակների տվյալները ուսումնասիրելիս կարելի է նկատել, որ հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական ակտիվության մակարդակը, չնայած որոշակի տատանումներին, ընդհանուր առմամբ աճման միտում ունի: Ինչպես կարելի է տեսնել գծապատկեր 1-ից, 2008 թ. նկատմամբ 2013 թվականին այդ

ցուցանիշը 59.5%-ից ավելացել է մինչև 63.4%, կամ աճը կազմել է մոտ 6.5%: Դիտարկվող ժամանակահատվածում տնտեսապես ակտիվ բնակչության ամենացածր մակարդակը (59.2%) գրանցվել է 2009 թվականին, ինչը պայմանավորված էր հետճգնաժամյան շրջանով: Այդ ցուցանիշը, նախորդ տարվա նկատմամբ, որոշակի չափով նվազել է նաև 2012 թ.-ին (63%-ից իջնելով մինչև 62.7%): Սակայն 2013 թ.-ին տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակը հասել է 63.4%-ի, որը դիտարկվող ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշն է: 2014 թ. առաջին եռամսյակի տվյալներով, տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակը կազմում է 61.5%, որը 2013 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է մոտ 3%-ով:

Տնտեսապես ակտիվ բնակչության մակարդակի տատանման միտումները կարելի է նկատել նաև զբաղվածության մակարդակի փոփոխման վարքագծում: Զբաղվածության մակարդակի ամենացածր ցուցանիշը դարձյալ գրացվել է 2009 թվականին (այն կազմել է միայն 48.1%, այն դեպքում, երբ 2008թ.-ին այն 49.8% էր), ինչը նույնպես բացատրելի է, եթե հաշվի առնենք համաշխարհային տնտեսությունում 2008 թ.-ից սկսված ճգնաժամային երևույթները: Դիտարկվող ժամանակահատվածում զբաղվածության մակարդակի ցուցանիշն ամենաբարձրն է եղել դարձյալ 2013 թ.-ին, կազմելով 53.18%: Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ հաշվետու ժամանակաշրջանում, տնտեսապես ակտիվ բնակչության ցուցանիշի շարժի հետ համեմատած, Հայաստանի Հանրապետության տնտեսությունում համարյա նույն միտումներով աճել է նաև զբաղվածության մակարդակը: Միաժամանակ, կարող ենք ընդգծել, որ ի տարբերություն տնտեսապես ակտիվ բնակչության ցուցանիշի փոփոխություններին, այստեղ աճն ավելի կայուն է եղել, և 2012 թ.-ին զբաղվածության մակարդակի անկում չի արձանագրվել: 2014 թ. առաջին եռամսյակի տվյալներով[1], զբաղվածության մակարդակը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում կազմել է 50.5%, որը 2013 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է ավելի քան 4%-ով:

Ինչ վերաբերում է գործազրկության մակարդակը բնութագրող մեծությանը, ապա վերջինս 2008-2010թթ. դրսևորել է աճման միտում, 2008 թ.-ի 16.4%-ից հասնելով մինչև 19%-ի՝ 2010 թ., ինչը դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշն է: Այնուհետև, ուսումնասիրվող տարիների ընթացքում այն սկսել է աստիճանաբար նվազել և 2013 թ. տվյալներով արդեն կազմել է 16.18%: Այսինքն, կարող ենք ասել, որ 2013 թ.-ին գործազրկության մակարդակը (16.18%) առավել ցածր է եղել Հայաստանի Հանրապետության տնտեսության համար նախաճգնաժամային տարի համարվող 2008 թ.-ի համապատասխան ցուցանիշից (16.4%): 2014 թ. առաջին եռամսյակի տվյալներով[2], գործազրկության մակարդակը կազմում է 17.8%, ինչն արդեն նկատելիորեն բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (2013 թվականի առաջին եռամսյակի տվյալներով գործազրկության մակարդակը հավասար էր 16.9%):

[1] Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-հունիսին», էջ 88
[2] Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-հունիսին», էջ 88




**Գծապատկեր 1. Զբաղվածության, տնտեսական ակտիվության և գործազրկության մակարդակները՝ արտահայտված տոկոսներով**[3]

Գործազուրկների ընդհանուր թիվը և բաշխումն ըստ սեռի ու կրթական մակարդակի (արտահայտված տոկոսներով) բերված են գծապատկերներ 2-ում և 3-ում[4]:

[3] 2013 թվականի տվյալը նախնական է, աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-մարտին» էջ 100.

[4] Զբաղվածության մակարդակ հաշվարկված է աշխատանքային ռեսուրսների (ըստ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի) թվաքանակի նկատմամբ:
Գործազրկության մակարդակը հաշվարկված է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի նկատմամբ:




**Գծապատկեր 2. Գործազուրկներն՝ ըստ սեռի** [5]

Գործազուրկների ընդհանուր թիվը հանրապետությունում 2008-2010 թթ ավելացել է: Եթե 2008 թ.-ին այդ ցուցանիշը կազմում էր 231.6 հազար մարդ, ապա 2010 թ. տվյալներով այն արդեն կազմում էր 278.2 հազար մարդ (կամ աճը կազմել էր 20.1%): Ընդ որում, 2010 թ.-ից սկսած այդ ցուցանիշը սկսել է տարեցտարի նվազել և 2013 թ.-ին արձանագրվել է դիտարկվող ժամանակաշրջանի համար ամենացածր մեծությունը՝ 224.7 հազար մարդ (2010 թ. նկատմամբ այն նվազել է 19.2%-ով): 2014 թվականի առաջին եռամսյակի տվյալներով, գործազուրկների թվի աճ է գրանցվել՝ Հայաստանի Հանրապետության տնտեսությունում գործազուրկների ընդհանուր թիվը կազմում է 253.9 հազար մարդ:

Գործազուրկների բաշխվածությունն ըստ սեռի ունի հետևյալ պատկերը: Տղամարդկանց շրջանում գործազուրկների թիվը 2009 թ.-ին նախորդ տարվա նկատմամբ նկատելիորեն ավելացել է՝ 108.5 հազար մարդուց հասնելով մինչև 133.3 հազար մարդու (կամ աճը կազմել էր 22.8%): Այնուհետև նկատվել է այդ ցուցանիշի որոշակի կայունացում, իսկ վերջին երկու տարիներին (2012-2013 թթ)՝ կտրուկ անկում: Այստեղ նույնպես 2013 թ.-ին արձանագրվել է դիտարկվող ժամանակաշրջանի համար ամենացածր մեծությունը՝ 101.9 հազար մարդ (2010 թ. նկատմամբ այստեղ նվազումը կազմում է արդեն 23.1%): Կին գործազուրկների թվի դիտարկումը ցույց է տալիս, որ այստեղ այնքան էլ բնորոշ չեն կտրուկ տեղաշարժերը: 2008-2010 թթ այդ ցուցանիշն աճել է՝ 123.1 հազար մարդուց հասնելով մինչև 145.7 հազար մարդու (կամ աճը կազմել էր 18.3%): Այնուհետև, ըստ դիտարկվող տարիների արձանագրվել է կին գործազուրկների թվի որոշակի անկում՝ 2013 թ.-ին կազմելով 122.8 հազար մարդ, ինչը դարձյալ համարվում է դիտարկվող ժամանակաշրջանի նվազագույն մեծությունը (2010 թ. նկատմամբ նվազումը հավասարվում է միայն 15.8%-ի):

[5] 2013 թվականի տվյալը նախնական է, աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-մարտին» էջ 100.

2014 թվականի առաջին եռամսյակի տվյալներով, գործազուրկների ընդհանուր թիվը, ինչպես նշվեց, կազմում է 253.9 հազար մարդ, ընդ որում, նրանցից 124.9 հազարը տղամարդիկ են, իսկ 129 հազարը՝ կանայք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ տղամարդ գործազուրկների թիվն աճել է 15.1 հազար մարդով, իսկ կանանցը՝ 8.6 հազար մարդով:




Գծապատկեր 3. Գործազուրկներն՝ ըստ կրթական մակարդակի (հազ. մարդ)

Գործազուրկների շրջանում առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողները, որոնց թիվը 2008-2010 թթ աճել է 22.8%-ով՝ 95.7 հազար մարդուց հասնելով մինչև 117.6 հազար մարդու: Այնուհետև, հաջորդ երկու տարիներին (2010-2012 թթ) այն համարյա նույն տեմպերով նվազել է՝ 2012 թ.-ին կազմելով 94.6 հազար մարդ, ինչը նույնպես համարվում է որպես ուսումնասիրվող ժամանակահատվածի նվազագույն մեծություն: Մտահոգիչ է այն փաստը, որ 2008-2011 թթ գործազուրկների մեջ բարձրագույն կրթություն ունեցողների թիվը աճել է 43.8%-ով և արդեն 2011 թ. տվյալների տվյալներով բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկներն իրենց թվաքանակով զիջում են միայն միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողներին: Նույն միտումը շարունակվում է նաև 2012 թ.-ին:

Գծապատկեր 3-ի դիտարկումը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում էական փոփոխություններ չեն կրել նախամասնագիտական (արհեստագործական), հիմնական ընդհանուր և տարրական ու ոչ լրիվ տարրական կրթություն ունեցող գործազուրկների թվաքանակները: 2009-2011 թթ աճման և նվազման որոշակի միտումներ է դրսևորել միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրթություն ունեցող գործազուրկների թվաքանակը:




**Գծապատկեր 4. Զբաղվածներ, ընդամենը** [6]

Գծապատկեր 4-ում ներկայացված է Հայաստանի Հանրապետության տնտեսությունում զբաղվածների ընդհանուր մեծության շարժը 2008-2013 թթ-ի կտրվածքով: Ինչպես երևում է գծապատկերից, վերջին տարիների ընթացքում զբաղվածների թիվն ամենացածր մակարդակի վրա է եղել 2009 թ.-ին (1152.8 հազար մարդ), ինչը պայմանավորված էր ճգնաժամային շրջանով: Այդ

[6] 2013 թվականի տվյալը 2013 թ. 4 եռամսյակների միջինն է, աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-մայիսին»

ցուցանիշի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2010թ.-ին (1185.2 հազար մարդ): Գծապատկերը նաև ցույց է տալիս, որ զբաղվածների ընդհանուր թիվը 2010 թ.-ից հետո նվազման միտում ունի: 2014 թվականի առաջին եռամսյակում զբաղվածների թիվը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում եղել է 1175.8 հազար մարդ, ինչը համեմատաբար մեծ է ուսումնասիրվող նախորդ տարիների նույն ժամանակահատվածի տվյալներից և այս իմաստով դրական երևույթ է:

Ինչպես երևում է ստորև բերված գծապատկեր 5-ից, զբաղվածների ընդհանուր թվաքանակում երիտասարդների թիվը, ինչպես և զբաղվածների ընդհանուր թիվը, 2009 թվականին նվազել է: Զբաղվածների ընդհանուր թվաքանակում երիտասարդների բաժինը շատ քիչ տատանումներ է ունեցել: Այսպես, 2008թ.-ին 1183.1 հազար զբաղվածներից 246.9 հազարը եղել են երիտասարդներ (ինչը կազմում է զբաղվածների 20.9%-ը), 2009 թ.-ին այդ ցուցանիշը դարձել է 20.2%, 2010 թ.-ին՝ 21.0%, 2011 թ.-ին՝ 20.1% և 2012թ-ին՝ 20.2%: 2012 թվականին զբաղված երիտասարդների թիվը (բացարձակ մեծությամբ) 2008 թվականի ցուցանիշից պակաս է 10 հազար մարդով (4.1%): Զբաղված երիտասարդների թիվը (բացարձակ մեծությամբ) դիտարկվող տարիներին ամենաբարձրն է եղել 2010 թ.-ին (248.3 հազար մարդ), իսկ ամենացածրը՝ 2009 թ.-ին՝ (232.3 հազար մարդ):




**Գծապատկեր 5 Երիտասարդների թիվը ընդհանուր զբաղվածների թվաքանակում[7] (հազ. մարդ)**

Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 6-ում բերված մեծությունները, 2009-2012 թթ գործազրկության մակարդակն աճի միտում է դրսևորել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ միջինը 1.6 տոկոսային կետով: Ամենաբարձր գործազրկության մակարդակը գրանցվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում

[7] Երիտասարդների թիվը հաշվարկել է յուրաքայուր տարվա 15-19, 20-24, 25-29 տարիքային խմբերի արժեքների գումարի արդյունքում, աղբյուրը՝ www.armstatbank.am

(աճել է 2.4 տոկոսային կետով), իսկ  ամենացածրը արձանագրվել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում (նվազել է 8.3 տոկոսային կետով): 2012 թ. գործազրկության մակարդակն առանձնապես բարձր է եղել Երևանում (25.8%), ինչպես նաև Շիրակի (22.4%), Լոռու (19.8%) և Կոտայքի (20.4%) մարզերում: Վերը նշված մարզերում գործազրկության ցուցանիշը գերազանցում է 2012 թ. գործազրկության մակարդակի հանրապետական միջին ցուցանիշը (17.3%):




**Գծապատկեր 6. Գործազրկության մակարդակի բաշխվածությունը՝ ըստ ՀՀ մարզերի[8]**

2009-2013 թթ գործազրկության մակարդակն նվազման միտում է դրսևորել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում (միջինը 0.4% տոկոսային կետով), Սյունիքի մարզում՝ (միջինը 0.14 տոկոսային կետով), Արմավիրի մարզում՝ (միջինը 0.18 տոկոսով), ինչպես նաև Երևան քաղաքում՝ (միջինը 0.18 տոկոսային կետով): Նշված ժամանակահատվածում այս ցուցանիշի նվազման միտում է գրանցվել նաև Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում՝ (միջինը 1.32 տոկոսային կետով), իսկ 2013 թ.՝ 2012 թ. նկատմամբ այն աճել է 2.3 տոկոսային կետով: Հանրապետության մարզերում գործազրկության մակարդակների համեմատական վերլուծության արդյունքները վկայում են մարզերի միջև գործազրկության մակարդակի զգալի տարբերությունների մասին: Ընդ որում, այդ տարբերությունները խորանում են, կախված մայրաքաղաքից մարզի ունեցած հեռավորությունից:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալությանը (այսուհետ՝ գործակալություն) թափուր հաստիք ներկայացրած գործատուների թիվը 2013 թվականին 2008 թվականի նկատմամբ ավելացել է շուրջ 8 անգամ, 2863-ից կտրուկ բարձրանալով

[8] 2013 թվականի տվյալները ստացվել են ԱՎԾ-ից պաշտոնական գրությամբ:

մինչև 22642-ի (տես՝ գծապատկեր 7), իսկ 2012 թվականի նկատմամբ այն ավելացել է շուրջ 5.6 անգամ: Այստեղից կարող ենք հետևություն անել, որ այդ ցուցանիշի շեշտակի ավելացումը տեղի է ունեցել 2012-2013 թվականներին զբաղվածության ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում: Համագործակցող գուրծատուների թվաքանակի այսպիսի կտրուկ աճը պայմանավորված է նաև գործակալության նկատմամբ գործատուների վստահության աճով, ինչպես նաև իրականացվող ծրագրերի առավել լայն շրջանակներով:




**Գծապատկեր 7. Գործակալության հետ համագործակցող գործատուների թիվը**

Գործակալության գործունեության, այդ թվում՝ գործատուների հետ համագործակցության արդյունավետությունը բնութագրող որոշ ցուցանիշներ են ներկայացված գծապատկեր 8-ում:




**Գծապատկեր 8. Գործատուների և զբաղվածության համագործակցությունը բնութագրող ցուցանիշներ**

Գծապատկեր 8-ից կարելի է տեսնել, որ գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի թիվը դիտարկվող ժամանակահատվածում ունի կայուն աճի միտում (միջինը 2293 աշխատատեղ յուրաքանչյուր տարվա համար): Կարելի է նկատել նաև, որ նույն կերպ աճում է զբաղվածության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվածների թիվը (յուրաքանչյուր տարի միջին հաշվով 799 անձ ավելի է տեղավորվում աշխատանքի): Նույնպիսի միտում է դիտարկվում նաև գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի ամսական միջին թվի վերլուծության դեպքում (յուրաքանչյուր տարի միջին հաշվով 234 ավելի աշխատատեղ): Չկրկնվող թափուր աշխատատեղերի միջինացված ցուցանիշը ևս աճ է ցույց տալիս (չկրկնվող 320 ավել աշխատատեղ յուրաքանչյուր տարի): Ընդհանրացնելով, կարող ենք ընդգծել, որ 2008 թվականի նկատմամբ 2013 թվականին վերը նշված բոլոր ցուցանիշներն առավել բարձր են եղել: Մասնավորապես, 2013 թ. զբաղվածության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվածների թիվը 2008 թ. նույն ցուցանիշից առավել է 3993 անձով կամ 46.1%-ով, 2013 թ. գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի թիվը 2008 թ. նույն ցուցանիշից առավել է 11464 թափուր աշխատատեղով կամ 68.2%-ով, իսկ գործատուների կողմից ներկայացվող թափուր աշխատատեղերի ամսական միջին թիվը և չկրկնվող թափուր աշխատատեղերի

թիվը՝ համապասախանաբար 1170 թափուր աշխատատեղով և 1598 չկրկնվող թափուր աշխատատեղով: 2013 թվականի ցուցանիշները գերազանցում են 2012 թվականի ցուցանիշները բոլոր կետերով, բացառությամբ չկրկնվող թափուր աշխատատեղերի ցուցանիշների տվյալներից (այստեղ նկատելի է որոշակի նվազում 1823 չկրկնվող թափուր աշխատատեղի չափով):

2014 թ. հուլիսի 1-ի դրությամբ զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվել են 7228 աշխատանք փնտրող անձինք, աշխատանք փնտրողների 11.1%-ը՝ պլանավորված 7012 փոխարեն: Ծրագրերում փաստացի և պլանավորված ցուցանիշների տարբերությունը հիմնականում պայմանավորված է նպաստառու գործազուրկների ամսական միջին թվի աճով, քանի որ «Գործազրկության նպաստի վճարում» ծրագրով հաստատված ամսական միջին թվով 3285 գործազուրկի փոխարեն նպաստ է ստացել 6002-ը, որը մինչև տարեվերջ կապված ծրագրի դադարեցման հետ կնվազի:

Զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկված անձանց թիվը 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 1226 (2014թ. 1-ին կիսամյակի համար ցուցանիշի աճը կազմել է 3.0%):

2014 թ. հուլիսի 1-ի դրությամբ.

1) աշխատանքի են տեղավորվել գործակալությունում հաշվառված ՝

ա. աշխատանք փնտրողների շուրջ 8 %-ը կամ 5199 մարդ,

բ. երիտասարդների 11.0%-ը,

գ. աշխատաշուկայում անմրցունակ անձանց 4.9%-ը.

2) գործակալությունը համագործակցել է 4034 գործատուների հետ, իսկ գործատուներից ստացված և հավաքագրված թափուր աշխատատեղերի թիվը կազմել է 11965 կամ ամսական միջին թվով 1994 աշխատատեղ՝ 2014 թվականի զբաղվածության կարգավորման պետական ծրագրով նախատեսված 1200-1500 աշխատատեղի փոխարեն: 2014 թվականի առաջին կիսամյակում չկրկնվող թափուր աշխատատեղերի թիվը կազմել է 4413:

4. Հաշվի առնելով ամենամյա ծրագրի 3-րդ կետում բերված զբաղվածության իրավիճակային վերլուծության ամփոփ արդյունքները, ինչպես նաև հիմք ընդունելով Հեռանկարային զարգացման ծրագրում և զբաղվածության ռազմավարության մեջ սահմանված նպատակներն ու թիրախները՝ 2015 թվականին զբաղվածության պետական կարգավորման ոլորտի համար առանձնացվում են հետևյալ հիմնախնդիրները և դրանց համապատասխան լուծումները.

*1) Հայաստանի աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի քրոնիկ անհամապատասխանությունը, առանձին մասնագիտությունների գծով թափուր աշխատատեղերի լրացման խոչընդոտները, գործազրկության բարձր մակարդակը*

Աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը դեռևս կրում է քանակական, որակական և տարածքային բնույթ՝ չնայած այն հանգամանքին, որ տնտեսական ակտիվության ցուցանիշը վերջին տարիներին անընդհատ աճել է:

Բերված հիմնախնդիրների լուծմանն են միտված ամենամյա ծրագրում ներառված բոլոր ծրագրերն ու ծառայությունները:

*2) Աշխատաշուկայի տարածքային անհամամասնություններով պայմանավորված առանձին տարածաշրջաններում գործազրկության մակարդակների էական տարբերությունների առկայությունը, գյուղական համայնքներում բնակչության թերզբաղվածությունը, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական զբաղվածության ցածր մակարդակը*

Տնտեսական ակտիվության և գործազրկության տեսանկյունից Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում շարունակում է խնդիր մնալ անհավասարաչափ բաշխումը:

Մարզերի տնտեսական զարգացման անհամաչափությունների զսպման և հետ մնացող տարածքների առաջանցիկ զարգացման նպատակներից ելնելով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերից դեպի մայրաքաղաք կամ արտերկիր աշխատուժի արտահոսքը մեղմելու նպատակով՝ ամենամյա ծրագրով նախատեսված են կոնկրետ ծրագրեր:

*3) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց զբաղվածության ապահովման դժվարությունները*

Բերված հիմնախնդիրների լուծմանն են միտված ամենամյա ծրագրում ներառված բոլոր ծրագրերն ու ծառայությունները:

*4) Կանանց շրջանում գործազրկության միջին հանրապետական ցուցանիշից բարձր մակարդակը*

Հիմնախնդրի լուծմանն են ուղղված «Ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրության աջակցություն», «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում» ծրագրերը:

*5) Առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող երիտասարդների աշխատանքի տեղավորման հնարավորությունների ցածր մակարդակը*

Երիտասարդների մուտքը աշխատաշուկա դյուրինացնելու նպատակով կիրականացվեն՝ «Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում», «Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում», «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում» ծրագրերը, իսկ ձեռնարկատիրական գործունեության ջիղ ունեցող երիտասարդներին կօգնի «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագիրը:

*6) Պետական-մասնավոր հատվածների միջև, այդ թվում՝ աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների հետ գործակալության գործընկերային և փոխշահավետ համագործակցության բացակայությունը*

Նշված հիմնախնդրի լուծմանն են ուղղված հետևյալ ծառայությունները՝ գործակալության կողմից գործատուներին և աշխատանք փնտրող անձանց նոր, այդ թվում՝ էլեկտրոնային ծառայությունների տրամադրումը, իսկ աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններին մեթոդական աջակցության ու խորհրդատվության, առկա թափուր աշխատատեղերի և հաշվառված աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև «Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում» ծրագիրը:

5. Ամենամյա ծրագրում ներառված են ստորև ներկայացված ծրագրերը և ծառայությունները:

*1) Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում*

ա. Ծրագրի նպատակը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման և աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է.

բ. ծրագրի շահառուները գործազուրկներն են, ինչպես նաև աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրող անձինք.

գ. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հայտարարված մրցույթի արդյունքում ընտրված կազմակերպության կողմից շահառուների համար կազմակերպվում է մասնագիտական պատրաստում՝ նախնական մասնագիտական պատրաստում և արհեստագործական ուսուցում մինչև 6 ամիս տևողությամբ, վերամասնագիտացում և որակավորման բարձրացում՝ մինչև 3 ամիս տևողությամբ.

դ. մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված աշխատանք փնտրող անձին ուսուցման ամբողջ ընթացքում յուրաքանչյուր ամիս վճարվում է կրթաթոշակ.

ե. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 70%-ը պետք է լինեն գործազուրկներ, 10%-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք.

զ. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական գործակիցը կկազմի 17.4%, որը հաշվարկվում է հետևյալ ձևով. ուսուցումն ավարտելուց հետո 3 ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորված և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը բաժանվում է ծրագրում ընդգրկվածների ընդհանուր թվի վրա և արտահայտվում է տոկոսով:

*2) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում*

ա. Ծրագրի նպատակը գործատուի կողմից անմրցունակ անձանց տրվող աշխատավարձի մասնակի փոխհատուցման միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորվելուն նպաստելը և այդ ճանապարհով կայուն զբաղվածության ապահովումն է.

բ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են, (հաշմանդամություն ունեցող անձանց ծրագրում ընդգրկելիս հաշվի է առնվում ուղեկցող ունենալու անհրաժեշտությունը).

գ. հարմար աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով, գործատուին տրվում է փոխհատուցում՝ տվյալ անմրցունակ անձի համար սահմանված ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը, իսկ ուղեկցողի համար ուղեկցողի կարիք ունեցող անձանց տրվում է աշխատավարձի փոխհատուցում մինչև վեց օրացուցային ամիս ժամկետով, ամսական կտրվածքով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսի չափով.

դ. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 30%-ը պետք է լինեն գործազուրկներ, իսկ 50%-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք.

ե. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական գործակիցը կկազմի 17.1%, որը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագիրն ավարտելուց հետո ծրագրում ներառվածների և 1 տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվի տարբերությունը բաժանվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվի վրա և արտահայտվում է տոկոսով:

*3) Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում*

ա. Ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է.

բ. ծրագրի շահառուները գործազուրկներն են.

գ. ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից գործազուրկին վճարվում է աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափով, գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին վճարվում է նրա նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի 20 տոկոսի չափով հավելում, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված գումարի չափը, ինչպես նաև գործատուին տրամադրվում է գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը փոխհատուցելու համար.

դ. ծրագրի տևողությունը 3 ամիս է.

ե. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական գործակիցը կկազմի 17.3%, որը հաշվարկվում է հետևյալ ձևով. պրակտիկան ավարտելուց հետո 3 ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորված և 6 ամսվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը բաժանվում է ծրագրում ընդգրկվածների ընդհանուր թվի վրա և արտահայտվում է տոկոսով:

*4) Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում*

ա. Ծրագրի նպատակը գործատուի և աշխատանք փնտրողի անմիջական հաղորդակցման միջոցով մի կողմից՝ աշխատանք փնտրողի կայուն զբաղվածության ապահովումն է, իսկ մյուս կողմից՝ գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղի արդյունավետ համալրման ապահովումը.

բ. ծրագրի շահառուներն են աշխատանք փնտրողները և գործատուները.

գ. ծրագիրը մեկօրյա միջոցառում է, որն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված ծառայություններ մատուցող կազմակերպության միջոցով.

դ. ակնկալվում է, որ աշխատանքի տոնավաճառների արդյունքում աշխատանքի կտեղավորվեն առնվազն 586 աշխատանք փնտրողներ և աշխատանքի տոնավաճառին մասնակցած աշխատանք փնտրողներից առնվազն 1750 անձինք կհաշվառվեն գործակալության համապատասխան տարածքային կենտրոնում:

*5) Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում*

ա. Ծրագրի նպատակը տնտեսության մեջ և աշխատաշուկայում տեղի ունեցող զարգացումների գնահատումն ու միտումների բացահայտումը, ինչպես նաև աշխատուժի պահանջարկի կանխատեսումն է.

բ. ակնկալվող արդյունքը աշխատաշուկայի իրավիճակի բազմակողմանի պատկերը, գնահատված միտումները և պահանջարկի օբյեկտիվ կանխատեսումն է, ինչը հիմք կհանդիսանա հաջորդ տարվա՝ իրավիճակից բխող ամենամյա ծրագրի պլանավորման համար:

*6) Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցության տրամադրում*

ա. Ծրագրի նպատակը աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում, մասնավորապես, գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է.

բ. ծրագրի շահառուներն են գործազուրկները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք.

գ. ծրագրի շրջանակներում շահառուներին փոխհատուցվում են հետևյալ ծախսերը.

շահառուի և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսը,

շահառուի և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսը,

մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախսը,

միանվագ ֆինանսական աջակցություն՝ նվազագույն ամսական աշխատավարձի եռապատիկի չափով,

ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով,

աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50%-ից մինչև կրկնապատիկի չափով, որը հաստատված է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի հուլիսի 3-ի N 82-Ա/1 հրամանով.

ե. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվածների առնվազն 90%-ը պետք է լինեն գործազուրկներ, 10%-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք.

զ. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական գործակիցը կկազմի 15.5%, որը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագիրն ավարտելուց հետո աշխատանքի տեղավորվածների և 1 տարվա ընթացքում ազատվածների թվի տարբերությունը բաժանվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվի վրա և արտահայտվում է տոկոսով:

*7) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում*

ա. Ծրագրում ներառված են հետևյալ 2 ենթածրագրերը՝

աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին,

աշխատաշուկայում անմրցունակ հանդիսացող և հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին:

Նշված երկու ենթածրագրերն աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար կարող են իրականացվել ինչպես համատեղ, այնպես էլ առանձին՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17--ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 8 հավելվածի պահանջները.

բ. աշխատաշուկայում անմրցունակ հանդիսացող և տեսողության խնդիրներ ունեցող 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղի հարմարեցման շրջանակներում, այդ անձանց, ըստ գնահատված անհրաժեշտության, տրամադրվում է համապատասխան համակարգչային տեխնիկա.

գ. ծրագրի նպատակն աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների՝ աշխատանքի վայրում ձեռքբերման հնարավորությունների ընձեռման միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է, ինչպես նաև աշխատատեղի հարմարեցման աջակցության միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածության ապահովումը.

դ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են.

զ. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական գործակիցը կկազմի 15%, որը հաշվարկվում է հետևյալ ձևով. գործատուին միանվագ փոխհատուցումը տրամադրելուց հետո աշխատանքի ընդունված անձանց և այդ անձանցից՝ 1 տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվի տարբերությունը բաժանվում է աշխատանքի ընդունված անձանց թվի վրա և արտահայտվում է տոկոսով:

*8) Գործազրկության նպաստի վճարում*

Ծրագիրը, որպես զբաղվածության պետական կարգավորման պասիվ ծրագիր, ներառված չէ «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, դրա փոխարեն նշված օրենքում ներառվել են ծրագրեր, որոնք խթանում են աշխատանք փնտրելու ակտիվ գործընթացները: Ծրագիրը կիրականացվի մինչև 2015 թվականի առաջին կիսամյակ:

ա. Ծրագրի շահառուները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործազրկության նպաստի ստացման իրավունք ունեցող գործազուրկներն են.

բ. գործազրկության նպաստի ստացման տևողությունը 6-12 ամիս է.

գ. գործազրկության նպաստը վճարվում է գործազրկության նպաստի իրավունք ձեռք բերած գործազուրկներին՝ գործատուներին այցելելու և առկա թափուր աշխատատեղերին ծանոթանալու, ակտիվ աշխատանք փնտրելու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար:

*9) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում*

ա. Ծրագրի նպատակը փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն ու աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության իրականացման և ինքնազբաղվածության խթանման համար աջակցության տրամադրումն է, ինչպես նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումն է.

բ. ծրագրի շահառուներն են՝ աշխատաշուկայում անմրցունակ անձինք.

գ. ծրագրի շրջանակներում նախարարությունը «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՓՄՁ ԶԱԿ) հետ կնքում է ծրագրի կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ համագործակցության վերաբերյալ պայմանագիր, համաձայն որի ՓՄՁ ԶԱԿ-ը գործակալության կողմից ուղարկված անմրցունակ անձանց տրամադրում է ծրագրի շրջանակներում ակնկալվող ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցություն՝ խորհրդատվություն, ուսուցում, ձեռնարկատիրական գործունեության գործարար ծրագրի մշակում.

դ. ակնկալվում է, որ ծրագրում ընդգրկվողների առնվազն 50%-ը պետք է լինեն գործազուրկներ, իսկ 30%-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք.

ե. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական գործակիցը կկազմի 90%, որը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագրի շրջանակներում տրամադրվող աջակցությամբ ձեռնարկատիրական գործունեություն

իրականացնողների և նրանցից՝ 1 տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցրածների ու աշխատանքից ազատված վարձու թվի տարբերությունը բաժանվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվի վրա և արտահայտվում է տոկոսով:

*10) Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում*

ա. Ծրագրի նպատակը աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովումն է՝ աշխատանքի տեղավորման լրացուցիչ հնարավորությունների ընձեռման միջոցով.

բ. ծրագրի շահառուներն են՝ աշխատաշուկայում անմրցունակ անձինք.

գ. անմրցունակ անձանց, որոնց տարածքային կենտրոնն առնվազն երեք ամսվա ընթացքում չի տեղավորում հարմար աշխատանքի, որպես աշխատանքի տեղավորման լրացուցիչ հնարավորություն, տրամադրում է աջակցություն համապատասխան փոխհատուցման հավաստագրի միջոցով՝ ոչ պետական կազմակերպությունների աշխատանքի տեղավորման ծառայություններից օգտվելու համար.

դ. փոխհատուցման հավաստագրի միջոցով փոխհատուցումը տրամադրվում է այն ոչ պետական կազմակերպություններին, որոնք նախարարության հետ համագործակցելու նպատակով ստորագրել են համագործակցության հուշագիր, հաշվառված և ներառված են նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված ցանկում.

ե. անմրցունակ անձին աշխատանքի տեղավորման նպատակով ոչ պետական կազմակերպությանը տրամադրվող փոխհատուցման հավաստագրի արժեքը վճարվում է փուլերով, մասնավորապես, գումարի ընդհանուր արժեքի՝

5 տոկոսը փոխանցվում է ոչ պետական կազմակերպությանը՝ անմրցունակ անձի հետ աշխատանքի տեղավորման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելուց հետո,

25 տոկոսը ոչ պետական կազմակերպությանն է փոխհատուցվում վերջինիս կողմից անմրցունակ անձին աշխատանքի տեղավորելուց հետո,

70 տոկոսը փոխանցվում է ոչ պետական կազմակերպությանը՝ անմրցունակ անձին աշխատանքի տեղավորելուց մեկ տարի հետո, եթե այդ ընթացքում վերջինս շարունակում է աշխատել ոչ պետական կազմակերպության միջնորդությամբ.

զ. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական գործակիցը կկազմի 15%, որը հաշվարկվում է հետևյալ ձևով. համապատասխան հավաստագրով մասնակի փոխհատուցման առաջին մասնաբաժինն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորվածների և աշխատանքի տեղավորվելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով:

*11) Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում*

ա. Ծրագրի նպատակը սեզոնային զբաղվածության ապահովման միջոցով հանրապետության առավել խոցելի և աղքատ գյուղական բնակավայրերի բնակչության սոցիալական լարվածության մեղմումն ու աշխատանքի արտադրողականության բարձրացումն է, նրանց կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, իրավիճակից բխող մարտահրավերներին արագ արձագանքող միջոցներով՝ գյուղացիական տնտեսություններին աջակցելը.

բ. ծրագրի շահառուները գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող աշխատաշուկայում անմրցունակ անձինք են.

գ. ծրագիրն առաջնահերթության կարգով իրականացվում է՝

գյուղացիական տնտեսության՝ բնական պատճառներով ստացած վնասների վերականգնման համար,

բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերում.

դ. հող օգտագործողին տրվում է ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն, եթե.

ընտանիքը հաշվառված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում և ստանում է ընտանեկան նպաստ,

ընտանիքում առկա է երկու և ավելի անչափահաս,

ընտանիքի անդամներից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է.

ե. ծրագիրը կազմակերպում և իրականացնում է գործակալությունը՝ նախարարության, մարզպետարանի, գյուղական համայնքների, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների մասնակցությամբ և գործուն աջակցությամբ:

*12) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում*

ա. Այցելության ծախսերի փոխհատուցման նպատակն է անմրցունակ անձանց ակտիվացումը, ինքնուրույն աշխատանքի տեղավորվելուն նպաստելը և այդ ճանապարհով կայուն զբաղվածության ապահովումը.

բ. ծրագրի շահառուներն աշխատաշուկայում անմրցունակ անձինք են.

գ. այցելության ծախսերի փոխհատուցումն անմրցունակ անձանց տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17–ի N 534-Ն որոշմամբ հաստատված N 18 հավելվածով սահմանված չափերին համապատասխան՝ գործատուին այցելելու հետ կապված տրանսպորտային, ինքնակենսագրության կազմման, գործատուին պատշաճ մակարդակով ներկայանալու նպատակով իրականացվող ծախսերի որոշակի մասը փոխհատուցելու համար.

դ. ծրագրի առավելագույնը տևողությունը երեք ամիս է.

ե. ծրագրում ընդգրկված անձանց կայուն զբաղվածության միջին հանրապետական գործակիցը կկազմի 15%, որը հաշվարկվում է հետևյալ ձևով. աշխատանքի տեղավորված և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկվածների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով:

*13) Մասնագիտական կողմնորոշման, համակարգի մեթոդաբանության ապահովման և կադրերի վերապատրաստման ծառայություններ*

ա. Ծրագրի նպատակը հանրակրթության ոլորտում, մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների մասնագիտական կողմնորոշման, անձի ինքնագնահատման, կարիերայի պլանավորման, ձեռներեցությամբ սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատաշուկա մուտք գործելու համար հիմնական կարողությունների զարգացմանն ուղղված մեթոդաբանության, ուսումնական ծրագրերի մշակման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշման համակարգի կադրերի վերապատրաստման, հանրային իրազեկման ապահովումն է.

բ. ծրագրի շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինտեգրված սոցիալական ծառայությունների համապատասխան մասնագետները:

*14) Գործակալությունը զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում տրամադրում է նաև հետևյալ հիմնական ծառայությունները՝*

ա. աշխատանք փնտրող անձին անհրաժեշտ տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում և հաշվառում, կայուն զբաղվածության ապահովման նպատակով՝ կարիքների գնահատում և անհատական ծրագրի կազմում.

բ. գործատուներին անհրաժեշտ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում.

գ. գործատուներից թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ստացում և հավաքագրում.

դ. աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում.

ե. աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն.

զ. աշխատանք փնտրող անձանց, թափուր աշխատատեղերի, գործակալության հետ համագործակցող գործատուների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանների վարում.

է. աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններին անհրաժեշտ տեղեկատվության և մասնագիտական խորհրդատվության, ինչպես նաև մեթոդական աջակցության տրամադրում.

ը. զբաղվածության պետական ծրագրերի և ծառայությունների հանրային իրազեկում:

7. Ամենամյա ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է՝

1) աշխատաշուկայի պետական կարգավորման ծրագրերում ներառվող անձանց թվաքանակի աճ առնվազն 5%-ով՝ նախորդ տարվա համեմատ.

2) ծրագրերում ներառված հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման աճ առնվազն 50%-ով՝ նախորդ տարվա համեմատ.

3) գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված երիտասարդների առնվազն 18%-ի աշխատանքի տեղավորում.

4) կայուն զբաղվածության գործակցի ապահովում՝ առնվազն 23.7%, կամ որ նույնն է՝ ամենամյա ծրագրի իրականացման արդյունքում 2843 անձի կայուն զբաղվածության ապահովում.

5) գործատուներից ստացված և հավաքագրված չկրկնվող թափուր աշխատատեղերի թվի աճ առնվազն 10%-ով՝ նախորդ տարվա համեմատ.

6) գործակալության տարածքային կենտրոնների հետ համագործակցող գործատուների թվի աճ առնվազն 5%-ով՝ նախորդ տարվա համեմատ:

**ՑԱՆԿ**
**ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքները | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|
| 1. | Աշխատանք փնտրող անձանց խորհրդատվության տրամադրում | Տարվա ընթացքում շուրջ 250000 աշխատանք փնտրող անձանց տրամադրել խորհրդատվություն,<br>25000 անձանց հաշվառել զբաղվածության պետական գործակալությունում: | ֆինանսավորում չի պահանջում |
| 2. | Աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն | Իրականացնել 12100 աշխատանք փնտրող չզբաղված անձանց աշխատանքի տեղավորման միջնորդություն: | ֆինանսավորում չի պահանջում |
| 3. | Ծրագրերի արդյունավետության մոնիթորինգ և գնահատում, տեղեկատվական բազաների տվյալների համադրում | Զբաղվածության ծրագրերի նպատակայնության և հասցեականության թիրախավորված բարձրացում: | ֆինանսավորում չի պահանջում |
| 4. | Գործատուների հետ համագործակցություն | Ամսական կտրվածքով ապահովել 1400-1700 թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն՝ գործատուներից ստացված կամ հավաքագրված: | ֆինանսավորում չի պահանջում |
| 5. | Զբաղվածության պետական ծրագրերի հանրային իրազեկում | Յուրաքանչյուր ամիս և անհրաժեշտությունից ելնելով՝ համակարգում իրականացվող ծրագրերի վերաբերյալ տրամադրել տեղեկատվություն շահագրգիռ անձանց և լայն հասարակության ներկայացուցիչներին: | ֆինանսավորում չի պահանջում |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում և Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց կրթաթոշակի տրամադրում | Կազմակերպել 1700 գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող աշխատանք փնտրողների և գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող անձանց մասնագիտական ուսուցում, այդ թվում՝ կրթաթոշակի վճարում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը՝ 17.4%: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 289,000.0 հազար դրամ, այդ թվում կրթաթոշակի վճարում՝ 133,875.0 հազար դրամ միջազգային դոնոր կազմակերպությունների միջոցներ |
| 7. | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում | Կազմակերպել աշխատաշուկայում անմրցունակ 450 անձանց աշխատանքի ընդունելու դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցում, ինչպես նաև 112 հաշմանդամություն ունեցող անձանց՝ ուղեկցողի համար աշխատավարձի մասնակի փոխհատուցում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը՝ 17.1%: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 301,140.0 հազար դրամ |
| 8. | Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում | Կազմակերպել մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային փորձ չունեցող 350 գործազուրկների աշխատանքային պրակտիկան գործատուի մոտ: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը՝ 17.3%: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 114,432.5 հազար դրամ |
| 9. | Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում | Կազմակերպել 11 աշխատանքի տոնավաճառ: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 7,700.0 հազար դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| 10. | Գործազուրկներին այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցության տրամադրում | Կազմակերպել այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ 75 գործազուրկների և հաշմանդամություն ունեցող անձանց նյութական ծախսերի հատուցում: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը՝ 15.5%: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 77,850.0 հազար դրամ |
| 11. | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում | Գործատուի մոտ գործուղել աշխատաշուկայում անմրցունակ շուրջ 460 անձի՝ հմտություններն ու ունակությունները զարգացնելու համար, 123 հաշմանդամություն ունեցող անձի՝ աշխատատեղը հարմարեցնելու միջոցով աշխատանքի տեղավորվելու համար, այդ թվում՝ տեսողության խնդիրներ ունեցող առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձանց ուսուցում և համակարգչային տեխնիկա տրամադրելու համար: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը՝ 15%: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 153,500.0 հազար դրամ |
| 12. | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում | Կազմակերպել աշխատաշուկայում անմրցունակ 78 անձանց՝ ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական աջակցություն: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը՝ 90%: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 77,250.0 հազար դրամ |
| 13. | Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում | Իրականացնել մեկ հետազոտություն աշխատաշուկայի կանխատեսման նպատակով: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 5,000.0 հազար դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| 14. | Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում | Կազմակերպել աշխատաշուկայում անմրցունակ 100 անձի աշխատանքի տեղավորում՝ աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների օժանդակությամբ: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը՝ 15%: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 10,000.0 հազար դրամ |
| 15. | Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում, այդ թվում վարչարարական աշխատանքների կազմակերպում<br>Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության իրականացման ապահովում | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար կազմակերպել 3217 ծրագիր: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 1,125,808.0 հազար դրամ,<br><br>16,887.2 հազար դրամ |
| 16. | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում | Փոխհատուցել աշխատաշուկայում անմրցունակ 2301 անձի գործատուին այցելության ծախսերը: Ծրագրի կայուն զբաղվածության գործակիցը՝ 15%: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 124.254.0 հազար դրամ |
| 17. | Գործազրկության նպաստի վճարում<br><br>Գործազրկության նպաստի վճարման ծառայություններ | Ամսական միջին թվով 800 գործազուրկների վճարել գործազրկության նպաստ: | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 14,400.0 հազար դրամ,<br><br>187.2 հազար դրամ |
| 18. | Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստում | 3 մեթոդաբանական ձեռնարկի մշակում, 300 շահառուի վերապատրաստում, հանրային իրազեկում (300): | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 31,214.4 հազար դրամ |

Միջոցառումների ցանկում ներառված չէ «Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ» միջոցառումը, որը մատուցվում է Գյումրու ՊՈԱԿ-ի կողմից (2015 թ. ֆինանսական միջոցների չափը՝ 19,936.4 հազար դրամ):

## Զբաղվածության կարգավորման 2015 թ. պետական ծրագրերն ըստ ՀՀ մարզերի

հազ. դրամ

| Մարզ | ԱՐԱԳԱԾՈՏՆ | ԱՐԱՐԱՏ | ԱՐՄԱՎԻՐ | ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ | ԼՈՌԻ | ԿՈՏԱՅՔ | ՇԻՐԱԿ | ՍՅՈՒՆԻՔ | ՎԱՅՈՑ ՁՈՐ | ՏԱՎՈՒՇ | ԵՐԵՎԱՆ | ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 109.0 | 100.0 | 141.0 | 134.0 | 170.0 | 171.0 | 157.0 | 166.0 | 121.0 | 129.0 | 302.0 | 1700.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 16.0 | 15.0 | 21.0 | 20.0 | 25.0 | 26.0 | 23.0 | 25.0 | 25.0 | 21.0 | 43.0 | 260.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 18530.0 | 17000.0 | 23970.0 | 22780.0 | 28900.0 | 29070.0 | 26690.0 | 28220.0 | 20570.0 | 21930.0 | 51340.0 | 289000.0 |
| Աշխատանքի տոեղավորվածների թիվը | 48.0 | 63.0 | 60.0 | 64.0 | 71.0 | 73.0 | 63.0 | 65.0 | 82.0 | 70.0 | 125.0 | 784.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 17.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 18.0 | 18.0 | 18.0 | 17.0 | 16.0 | 16.0 | 23.0 | 17.4 |
| ***Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 42.0 | 37.0 | 30.0 | 48.0 | 44.0 | 39.0 | 35.0 | 42.0 | 32.0 | 32.0 | 69.0 | 450.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 21.0 | 18.0 | 15.0 | 24.0 | 22.0 | 20.0 | 18.0 | 21.0 | 16.0 | 16.0 | 35.0 | 226.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց ուղեկցողների թիվը | 10.0 | 9.0 | 7.0 | 12.0 | 11.0 | 10.0 | 9.0 | 11.0 | 8.0 | 8.0 | 17.0 | 112.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 28035.0 | 24727.5 | 20002.5 | 32130.0 | 29452.5 | 26145.0 | 23467.5 | 28192.5 | 21420.0 | 21420.0 | 46147.5 | 301140.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 16.0 | 16.0 | 16.0 | 17.0 | 17.0 | 17.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 25.0 | 17.1 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում*** | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 28.0 | 24.0 | 25.0 | 23.0 | 35.0 | 35.0 | 35.0 | 27.0 | 27.0 | 27.0 | 64.0 | 350.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 5.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 7.0 | 7.0 | 7.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 25.0 | 78.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 9091.8 | 7837.8 | 8151.3 | 7524.3 | 12227.0 | 11286.4 | 11599.9 | 8778.3 | 8778.3 | 8464.8 | 20692.4 | 114432.5 |
| Աշխատանքի տոեղավորվածների թիվը | 14.0 | 12.0 | 13.0 | 12.0 | 19.0 | 18.0 | 18.0 | 14.0 | 14.0 | 13.0 | 33.0 | 180.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 17.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 17.0 | 17.0 | 17.0 | 17.0 | 16.0 | 16.0 | 25.0 | 17.3 |
| ***Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 1230.0 | 1230.0 | 1230.0 | 1230.0 | 2040.0 | 1540.0 | 1540.0 | 2040.0 | 1030.0 | 1230.0 | 3560.0 | 17900.0 |
| գործատուներ | 30.0 | 30.0 | 30.0 | 30.0 | 40.0 | 40.0 | 40.0 | 40.0 | 30.0 | 30.0 | 60.0 | 400.0 |
| աշխատանք փնտրող անձանց թիվը, որոնցից՝ | 1200.0 | 1200.0 | 1200.0 | 1200.0 | 2000.0 | 1500.0 | 1500.0 | 2000.0 | 1000.0 | 1200.0 | 3500.0 | 17500.0 |
| հաշվառվել են զբաղվածության մարզային և տարածքային կենտրոններում | 120.0 | 120.0 | 120.0 | 120.0 | 200.0 | 150.0 | 150.0 | 200.0 | 100.0 | 120.0 | 350.0 | 1750.0 |
| Թափուր աշխատատեղերի թիվը | 180.0 | 200.0 | 200.0 | 250.0 | 350.0 | 300.0 | 350.0 | 350.0 | 150.0 | 150.0 | 450.0 | 2930.0 |
| Լրացված աշխատատեղերի թիվը | 36.0 | 40.0 | 40.0 | 50.0 | 70.0 | 60.0 | 70.0 | 70.0 | 30.0 | 30.0 | 90.0 | 586.0 |
| Տոնավաճառների թիվը | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 11.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 700.0 | 7700.0 |
| ***Աշխատաշուկայի հետազոտման աշխատանքների կազմակերպում*** | | | | | | | | | | | | |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | | | | | | | | | | | | 5000.0 |
| ***Գործազուրկին այլ վայրում գործազուրկներին աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում*** | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 5.0 | 5.0 | 5.0 | 10.0 | 5.0 | 4.0 | 6.0 | 6.0 | 3.0 | 6.0 | 20.0 | 75.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 0.0 | 1.0 | 1.0 | 6.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 6228.0 | 6228.0 | 6228.0 | 15570.0 | 6228.0 | 3114.0 | 6228.0 | 6228.0 | 1557.0 | 6228.0 | 14013.0 | 77850.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 14.0 | 14.0 | 14.0 | 15.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 14.0 | 15.0 | 20.0 | 15.5 |
| ***Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում*** | | | | | | | | | | | | |
| Ընդամենը ծրագրում ընդգկրված շահառուների թիվը, այդ թվում | 10.0 | 29.0 | 10.0 | 33.0 | 50.0 | 62.0 | 101.0 | 49.0 | 62.0 | 68.0 | 109.0 | 583.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 6.0 | 20.0 | 8.0 | 24.0 | 33.0 | 33.0 | 48.0 | 30.0 | 23.0 | 39.0 | 74.0 | 333.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 2600.0 | 7600.0 | 2600.0 | 8700.0 | 13000.0 | 16300.0 | 26800.0 | 12800.0 | 16300.0 | 17800.0 | 29000.0 | 153500.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 14.0 | 14.0 | 14.0 | 15.5 | 15.5 | 15.5 | 15.5 | 15.0 | 14.0 | 14.0 | 17.5 | 15.0 |
| ***ա)աշխատաշուկայում անմրցունակ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատատեղի հարմարեցման համար միանվագ փոխհատուցում գործատուին*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 2.0 | 6.0 | 2.0 | 7.0 | 10.0 | 13.0 | 22.0 | 10.0 | 13.0 | 14.0 | 24.0 | 123.0 |
| տեսողական խնդիրներ ունեցող անձանց թիվը | | | | | 2.0 | 2.0 | 4.0 | 3.0 | | | 12.0 | 23.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 1000.0 | 3000.0 | 1000.0 | 3500.0 | 5000.0 | 6500.0 | 11000.0 | 5000.0 | 6500.0 | 7000.0 | 12000.0 | 61500.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 10.0 | 10.0 | 10.0 | 12.0 | 12.0 | 12.0 | 12.0 | 12.0 | 10.0 | 10.0 | 15.0 | 11.4 |
| ***բ)աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին,*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 8.0 | 23.0 | 8.0 | 26.0 | 40.0 | 49.0 | 79.0 | 39.0 | 49.0 | 54.0 | 85.0 | 460.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 4.0 | 14.0 | 6.0 | 17.0 | 23.0 | 20.0 | 21.0 | 20.0 | 10.0 | 25.0 | 50.0 | 210.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 1600.0 | 4600.0 | 1600.0 | 5200.0 | 8000.0 | 9800.0 | 15800.0 | 7800.0 | 9800.0 | 10800.0 | 17000.0 | 92000.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 18.0 | 18.0 | 18.0 | 19.0 | 19.0 | 19.0 | 19.0 | 18.0 | 18.0 | 18.0 | 20.0 | 18.5 |
| ***Աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցման*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 127.0 | 151.0 | 109.0 | 190.0 | 283.0 | 230.0 | 300.0 | 138.0 | 81.0 | 133.0 | 559.0 | 2301.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 4.0 | 3.0 | 2.0 | 3.0 | 4.0 | 5.0 | 5.0 | 6.0 | 5.0 | 5.0 | 8.0 | 50.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 6858.0 | 8154.0 | 5886.0 | 10260.0 | 15282.0 | 12420.0 | 16200.0 | 7452.0 | 4374.0 | 7182.0 | 30186.0 | 124254.0 |
| Աշխատանքի տեղավորվածների թիվ | 38.0 | 45.0 | 33.0 | 57.0 | 85.0 | 69.0 | 90.0 | 41.0 | 24.0 | 40.0 | 168.0 | 690.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 14.0 | 12.0 | 15.0 | 15.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 16.0 | 13.0 | 12.0 | 20.0 | 15.0 |
| ***Գործազրկության նպաստի վճարում*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը | 55.0 | 43.0 | 58.0 | 63.0 | 86.0 | 107.0 | 72.0 | 70.0 | 52.0 | 54.0 | 140.0 | 800.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 990.0 | 774.0 | 1044.0 | 1134.0 | 1548.0 | 1926.0 | 1296.0 | 1260.0 | 936.0 | 972.0 | 2520.0 | 14400.0 |
| Գործազրկության նպաստի վարձավճար | 12.9 | 10.1 | 13.6 | 14.7 | 20.1 | 25.0 | 16.8 | 16.4 | 12.2 | 12.6 | 32.8 | 187.2 |
| ***Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | 4.0 | 5.0 | 3.0 | 8.0 | 9.0 | 8.0 | 10.0 | 5.0 | 4.0 | 4.0 | 18.0 | 78.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 1.3 | 1.0 | 1.0 | 3.0 | 3.0 | 2.0 | 3.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 6.0 | 23.3 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 3960.0 | 4950.0 | 2970.0 | 7920.0 | 8910.0 | 7920.0 | 9900.0 | 4950.0 | 3960.0 | 3960.0 | 17850.0 | 77250.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 |
| ***Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում*** | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրերի թիվը | 206.0 | 280.0 | 218.0 | 405.0 | 615.0 | 400.0 | 553.0 | 211.0 | 101.0 | 228.0 | 0.0 | 3217.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | 72100.0 | 98000.0 | 76300.0 | 141750.0 | 215250.0 | 139858.0 | 193550.0 | 73850.0 | 35350.0 | 79800.0 | | 1125808.0 |
| Պահպանման ծախսեր | 1081.5 | 1470.0 | 1144.5 | 2126.3 | 3228.8 | 2097.9 | 2903.3 | 1107.8 | 530.3 | 1197.0 | 0.0 | 16887.1 |
| ***Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում*** | | | | | | | | | | | | |
| Ծրագրում ընդգրկված շահառուների թիվը, այդ թվում՝ | - | - | - | - | 10.0 | - | - | - | - | - | 90.0 | 100.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | | | | | 1.0 | | | | | | 9.0 | 10.0 |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | - | - | - | - | 1,000.0 | - | - | - | - | - | 9,000.0 | 10,000.0 |
| Կայուն զբաղվածության գործակիցը | | | | | 14.0 | | | | | | 16.0 | 15.0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | | | | | | | |
| Բոլոր ծրագրերում ընդգրկված շահառուների ընդհանուր թիվը, այդ թվում՝ | 586.0 | 674.0 | 599.0 | 914.0 | 1307.0 | 1056.0 | 1269.0 | 714.0 | 483.0 | 681.0 | 1371.0 | 9654.0 |
| հաշմանդամություն ունեցող անձանց թիվը | 48.3 | 57.0 | 47.0 | 74.0 | 89.0 | 87.0 | 98.0 | 84.0 | 70.0 | 83.0 | 176.0 | 908.3 |
| Աշխատանքի տեղավորվածների թիվը ըստ ծրագրերի | 161.0 | 196.0 | 154.0 | 232.0 | 293.0 | 273.0 | 323.0 | 222.0 | 221.0 | 233.0 | 632.0 | 2940.0 |
| Կայուն զբաղվածության միջինացված գործակիցը | 23.0 | 22.0 | 23.0 | 23.0 | 25.0 | 24.0 | 24.0 | 23.0 | 22.0 | 22.0 | 30.0 | 23.7 |
| ծրագրերի իրականացման արդյունքում կայուն զբաղվածության ապահովում | 37.0 | 43.1 | 35.4 | 53.4 | 73.3 | 65.5 | 77.5 | 51.1 | 48.6 | 51.3 | 189.6 | 719.0 |
| ԶՏԿ-ների միջնորդությամբ աշխատանքի տեղավորվածների թիվ | 215.0 | 350.0 | 285.0 | 482.0 | 903.0 | 923.0 | 546.0 | 517.0 | 125.0 | 300.0 | 4539.0 | 9185.0 |
| Ընդամենը աշխատանքի տեղավորվածներ, այդ թվում՝ | 376.0 | 546.0 | 439.0 | 714.0 | 1196.0 | 1196.0 | 869.0 | 739.0 | 346.0 | 533.0 | 5171.0 | 12125.0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| կայուն զբաղվածներ | 86.5 | 120.1 | 101.0 | 164.2 | 283.5 | 283.5 | 206.0 | 170.0 | 76.1 | 117.3 | 1241.0 | 2849.0 |
| **Ընդամենը ֆին. միջոցներ** | **150187.2** | **177451.4** | **149009.9** | **250609.3** | **335746.3** | **250862.3** | **319351.5** | **173555.0** | **114487.8** | **169666.5** | **221481.7** | **2317408.8** |
| ***Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստում*** | | | | | | | | | | | | |
| Նախատեսվող ֆինանսական միջոցները | | | | | | | | | | | | 31214.4 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | | | | | | | **2348623.2** |

ՀԱՎԵԼՎԱԾ N 5

**ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ**
**ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ**
**2015 ԹՎԱԿԱՆԻ**

## I . ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Երեխայի իրավունքների պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագիրը» (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 և 34 հոդվածների պահանջներին համապատասխան:

Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N1231-Ա որոշմամբ հաստատված 47-րդ կետի 4-ի ա) ենթակետի «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1694-Ն որոշմամբ» ամրագրված քաղաքականության հիմնական ուղղություններն ու նպատակները:

Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մայիսի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրի» դրույթներին, համապատասխանում է երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին և ուղղված է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների լուծմանը:

## <u>II. Տարեկան ծրագրի նպատակը և խնդիրները</u>

1. Ծրագրի նպատակն է՝

1) սոցիալական պաշտպանության ոլորում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացումը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավումը, նշված հաստատություններում խնամվող երեխաների կյանքի որակի բարելավումը, նրանց ինտեգրումը հասարակությանը,

2) առողջապահության ոլորտում՝ երեխաների բժշկական օգնության որակյալ և մատչելի ծառայությունների ապահովումը, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների իրականացումը՝ ուղղված մանկական մահացության և հիվանդացության ցուցանիշների նվազեցմանը,

3) կրթության ոլորտում՝ կրթության համակարգի պահպանումը և շարունակական զարգացումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ հիմնական կրթության ապահովումը, հանրակրթական դպրոցներում ներառական կրթության հնարավորության ապահովումը, սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարումը,

4) մշակույթի ոլորտում՝ երեխայի գեղագիտական, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունների զարգացումը, գեղագիտական դաստիարակությունը, ինչպես նաև մշակութային արժեքների ճանաչումն ապահովելը,

5) անչափահասների արդարադատության ոլորտում՝ իրավախախտումներ կատարած անչափահասների վերականգնողական կենտրոնների ցանցի ընդլայնումը, անչափահաս դատապարտյալների զբաղվածության ապահովումը:

**2.Ծրագրի խնդիրն է՝**

6) սոցիալական պաշտպանության ոլորտում՝ առանց ծնողական խնամքի մնացած, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների հիմնախնդիրների վերհանումը, սոցիալմանկավարժական, սոցիալհոգեբանական գործնական աջակցության ցուցաբերումը, Երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի հզորացումը, սոցիալական պաշտպանության ոլորտի այլընտրանքային համակարգի ընդլայնումը և հզորացումը,

7) առողջապահության ոլորտում՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ապահովումը, հիվանդանոցային բուժօգնության ապահովումը, վերականգնողական-առողջարանային բուժման ապահովումը,

8) կրթության ոլորտում՝ նախադպրոցական կրթության ծառայությունների որակի ու մատչելիության ապահովումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վկայագրման չափորոշիչների և կիրառվող գործիքների կատարելագործումը, ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանցի ընդլայնումը,

9) մշակույթի ոլորտում՝ գեղարվեստական կրթության մատչելիության ապահովումը, գեղարվեստական կրթական հաստատությունների բնականոն գործունեության ապահովումը, ուսուցման մատչելիության ապահովումը արտադպրոցական գեղարվեստական դաստիարակության շրջանակներում՝ մասնավորապես սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած և իրավախախտում կատարած անչափահաս երեխաների մշակութային կրթության ապահովմամբ,

10) անչափահասների արդարադատության ոլորտում՝ ինչպես անչափահասների կողմից, այնպես էլ նրանց նկատմամբ կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման և բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքների իրականացումը:

**<u>Երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտում</u>** ՀՀ կառավարության կողմից վերջին տարիների իրականացված քաղաքականության հիմնական նպատակը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավումն է:

Ծրագրի նպատակն է՝

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, սոցիալական պաշտպանվածության ապահովումը, այդ թվում՝

- Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովումը, երեխայի և նրա ընտանիքի կարիքների առավել լիարժեք բավարարումը, այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացումը, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների բարելավումը, նշված հաստատություններում խնամվող երեխաների ինտեգրումը հասարակությանը, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, սոցիալական պաշտպանության իրավունքի ապահովումը, այդ թվում՝ մինչև 18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած երեխաների

խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, սոցիալհոգեբանական և բժշկական վերականգնման իրականացումը, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը, որը ենթադրում է երեխայի համարժեք սոցիալականացման ու հասարակությունում լիարժեք ինտեգրման գործընթացի ապահովումը ընտանիքում, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ընտանեկանին առավել մոտ կենսապայմանների ապահովումը, մանկատանը խնամվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը:

- երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում և մանկատներում խնամվող մինչև 18 տարեկան երեխաների՝ ընտանիք վերադարձի ապահովումը, հաստատություններում տեղավորման ռիսկի ենթակա երեխաների մուտքի կանխարգելումը հաստատություններ:
- մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, նրանց հետագա ինքնուրույն կյանքի կազմակերպումը և հասարակությանը ինտեգրման գործընթացի համակարգումը:
- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ 6-18 տարեկան առանց ծնողական խնամքի մնացած, ծնողների խնամքից զրկվելու վտանգի տակ գտնվող, ինչպես նաև աճի և զարգացման համար անբարենպաստ և վտանգավոր կենսապայմաններում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների հիմնախնդիրների վերհանումը, սոցիալմանկավարժական, սոցիալհոգեբանական գործնական աջակցության ցուցաբերումը:
- առանց ծնողական խնամքի մնացած մանկատան սաների խնամքի և դաստիարակության, ֆիզիկական և մտավոր զարգացման, կրթության գործընթացի ապահովումը, հաստատություն երեխայի մուտքի կանխարգելումը՝ խնամատար ընտանիքում խնամվող երեխայի խնամքի և դաստիարակության ապահովման շնորհիվ:
- այլընտրանքային ծառայությունների ընդլայնման միջոցով երեխաների հոսքի նվազեցումը մանկատներ, և հատուկ հանրակրթական հաստատություններ, 6-18 տարեկան երեխաների սոցիալական վերականգնումը, շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը:
- հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը՝ անկախ սեռից:
- Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի և բռնության երևույթի կանխարգելումը:

Հաշվի առնելով խնդրի շարունակական բնույթը, առաջիկա տարիներին անհրաժեշտ է աշխատանքներն ուղղել մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես.

Ծրագրի խնդիրն է՝

- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների բավարարման սահմանափակ հնարավորությունները,
- նախարարության համակարգի մանկատներում և երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում խնամվող երեխաների հոսքի կանխարգելման և խնամվողների թվի նվազեցման սահմանափակ հնարավորությունները,
- Խարբերդի մասնագիտացված մանկատան չափահաս սաների հաստատությունից դուրսբերման անհրաժեշտությունը /Խնդիրը քննարկվել է երեխաների պաշտպանության Ազգային հանձնաժողովի նիստում, ներկայացվել է ՀՀ կառավարություն/:

- վերականգնողական ծառայությունների պակասը,
- այլընտրանքային ծառայությունների պակասը,
- բռնության ենթարկված անձանց սոցիալական աջակցության մեխանիզմների բացակայությունը,
- թրաֆիքինգի զոհերի վերականգնման սահմանափակ հնարավորությունները:
- թրաֆիքինգի զոհերի և նրանց տրամադրվող աջակցության նվազագույն չափորոշիչների բացակայությունը:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների աջակցության քաղաքականությունն ուղղված է այդ երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքների ապահովմանը, նրանց մատուցվող այլընտրանքային ծառայությունների ցանցի զարգացմանը, ինչպես նաև երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը, նրանցում խնամվող երեխաների խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական զարգացման և հասարակությանն ինտեգրման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել և գործում է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգ՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներում, որի նպատակը՝ երեխաների պաշտպանության միասնական և համակարգված քաղաքականության իրականացման ապահովումն է:

ՀՀ Վարչապետի որոշմամբ ստեղծվել և 2005 թվականից գործում է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը, որի գործունեությունը հիմնականում ուղղված է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության երաշխիքների ապահովման միասնական պետական քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման մարմինների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցության համակարգմանը:

2006 թվականից գործում են մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, որոնց խնդիրն է մարզում՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի իրավունքների պաշտպանության ապահովումը և նպատակային ծրագրերի մշակումը և իրագործումը:

Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքով ամրագրված՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները հանդիսանում են երեխաների իրավունքների պաշտպանության առաջին մակարդակը, որոնք համագործակցելով մարզպետարանների համապատասխան բաժինների հետ, իրականացնում են երեխաների իրավունքների պաշտպանությունը համայնքներում:

«Երեխաների իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրի շրջանակում իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1. «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» միջոցառման շրջանակում համաձայն ՀՀ կառավարության 2004 թ. օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն և ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի «Մանկատանը (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 815-Ն որոշումների՝ 745 առանց ծնողական խնամքի մնացած 0-18 տարեկան երեխա խնամվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող երեխաների շուրջօրյա

խնամքի 6 հաստատությունում (այսուհետ՝ մանկատուն), որտեղ իրականացվում են նրանց շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը՝ սոցիալհոգեբանական վերականգնման աշխատանքները, իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, սնունդով, հագուստով և կենցաղային իրերով ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը: Վերը նշված 6 մանկատնից 3-ը ընդհանուր տիպի է, 3-ը՝ մասնագիտացված, որտեղ իրականացվում են կենտրոնական նյարդային համակարգի ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող շուրջ 510 երեխայի շուրջօրյա խնամքն ու դաստիարակությունը:

2. «Հայաստանի Հանրապետության երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ /բեռնաթափում/» միջոցառումն իրականացվել է նախարարության և «Առավոտ» հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագրի համաձայն ՀՀ Լոռու մարզում, որը նախատեսում է երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատություններից երեխաներին վերադարձնել կենսաբանական ընտանիքներ, ինչպես նաև կանխարգելել նրանց մուտքը հաստատություններ:

Միջոցառման շրջանակում հաստատություններից յուրաքանչյուր տարի կենսաբանական ընտանիք է վերադարձել և կանխարգելվել է 50 երեխայի մուտքը հաստատություններ: 2014 թ. միջոցառումն իրականացվում է նաև ՀՀ Շիրակի մարզում: Միջոցառման շրջանակում հաստատություններից յուրաքանչյուր տարի կենսաբանական ընտանիք կվերադառնա և կկանխարգելվի 100 երեխայի /յուրաքանչյուր մարզում 50 երեխա/ մուտքը հաստատություններ:

Միջոցառման շրջանակում 100 երեխայի ընտանիքներին տրամադրվում է դրամական օժանդակության փաթեթ:

3.«Կենսաբանական ընտանիքներ տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում» միջոցառումը վերոնշյալ միջոցառման բաղկացուցիչ մասն է կազմում:

Սույն միջոցառման շրջանակում յուրաքանչյուր տարի 50 երեխայի ընտանիքների տրամադրվել է աջակցություն՝ սննդի զամբյուղ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում: 2014 թվականից միջոցառումը իրականացվում է նաև ՀՀ Շիրակի մարզում, որի շրջանակում 50 երեխայի ընտանիքների կտրամադրվի նույնպիսի աջակցություն:

4. «Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» միրոցառումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2003 թ. հոկտեմբերի 30-ի «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետությունում մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագիրը հաստատելու մասին» N 1419-Ն որոշման:

Միջոցառման շրջանակում մանկատների շրջանավարտների համար իրականացվել են սոցիալական պաշտպանության միջոցառումներ՝ շրջանավարտների ուսումնասիրություն, կարիքների գնահատում, մասնագիտական կողմնորոշում, ուսուցում, վերապատրաստում, բժշկական օգնություն, իրավաբանական աջակցության տրամադրում, սոցիալհոգեբանական աջակցություն, բնակելի տարածքի ապահովում:

2014 թվականից ծրագիրն իրականացվում է Վանաձոր և Գավառ քաղաքներում՝ համապատասխանաբար «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 18-23 տարեկան շրջանավարտների համար:

Միջոցառման նպատակն է ապահովել մանկատների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, ստեղծել բավարար պայմաններ հետագա կյանքի ինքնուրույն կազմակերպման և նրանց հասարակությանն ինտեգրելու համար:

5. «Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում», որի շրջանակում 35 շահառուի տրամադրվում է կրթաթոշակ /15 շահառու/ և միանվագ դրամական օգնություն /20 շահառու/:

6. «Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգա ծության ծառայություններ» միջոցառման շրջանակում համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի «Երեխաներին ցերեկային խնամք տրամադրելու կարգը հաստատելու մասին» թիվ 1877-Ն որոշման՝ նախարարության համակարգի երեխաների սոցիալական հոգածության 3 կենտրոնի կողմից ծառայություններ են տրամադրվում ռիսկի ենթակա 6-18 տարեկան շուրջ 300 երեխայի և նրանց ընտանիքներին:

7. «Անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» միջոցառման շրջանակում, համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության «Երևանի «Զատիկ» մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N209-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1659-Ն որոշման, «Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոն»-ի կողմից յուրաքանչյուր տարի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 20 երեխայի տրամադրվում է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք՝ մինչև նրանց կենսաբանական ընտանիք վերադարձնելը, մանկատանը կամ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելը:

8. «Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ» միջոցառման շրջանակներում, համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում /մանկատուն, գիշերօթիկ/ երեխաների տեղավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1735-Ն որոշման, սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ 800 երեխա խնամվում է երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ 8 հաստատությունում, որտեղ երեխաների խնամքը տարանջատվում է կրթությունից և կազմակերպվում է հանրակրթական դպրոցում՝ երեխային հասարակությանն ինտեգրելու նպատակով:

9. «Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» միջոցառման շրջանակներում ծառայություններ են մատուցվում «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների խնամքի 4 ցերեկային կենտրոնի /Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ և նրանց հարակից գյուղեր/ դժվար իրավիճակներում գտնվող առնվազն 250 երեխայի: Նշված կենտրոնները, ինչպես նախորդ տարիներում, աջակցություն են ստանում ՀՀ պետական բյուջեից՝ 84 աշխատակցի տրամադրվում է աշխատավարձ:

10. «Հայաստանի Հանրապետության մանկատներում խնամվող դպրոցահասակ երեխաներին դրամական աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակում, համաձայն ՀՀ կառավարության 2004 թ. օգոստոսի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ճանաչելու և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1324-Ն որոշման, մանկատներում խնամվող 7-18 տարեկան դպրոցահասակ 219 երեխայի տրամադրվում է մանր ծախսերի համար նախատեսված գումար՝ /գրպանի գումար/:

11. «Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ» միջոցառման շրջանակում, համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին» թիվ 459-Ն որոշման, յուրաքնչյուր տարի մանկատան առանց ծնողական խնամքի մնացած 25 երեխա խնամվում է խնամատար ընտանիքներում՝ մինչև նրանց 18 տարին լրանալը:

2012-2013թթ. շարունակվել է իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի շուրջօրյա խնամքի հաստատություններում (մանկատներում) երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը:

ՀՀ պետական բյուջեից շուրջօրյա խնամքի հաստատություններին հատկացված ֆինանսական միջոցները տարեցտարի աճել են՝ պայմանավորված սննդի համար նախատեսված գումարի աճով, փափուկ գույքի ավելացմամբ և այլն: 2012 թվականին հատկացվել է 1,656,059.7 հազ.դրամ՝ 760 երեխայի խնամքի իրականացման համար, 2013 թվականին՝ 2,056,084.9 հազ. դրամ՝ 760 երեխայի շուրջօրյա խնամքի իրականացման համար, 2014 թվականին՝ 2,253,309,8 հազ. դրամ՝ 745 երեխայի շուրջօրյա խնամքի իրականացման համար:

Վերջին երկու տարիների ընթացքում երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման գործընթացով պայմանավորված՝ հաստատությունների բեռնաթափման արդյունքում, կրճատվել են մանկատներում խնամվող երեխաների փաստացի թվերը:

2012 թ. 760 երեխայի փոխարեն 6 մանկատանը փաստացի խնամվել է 724 երեխա, հաստատված թվի 95,2%-ը: 2013թ՝ 760 երեխայի փոխարեն փաստացի խնամվել է 719 երեխա, հաստատված թվի 94,6%-ը: Մեկ խնամվողի հաշվով մատուցվելիք ծառայության նվազագույն օրական միջին գինը 2012 թվականին կազմել է 6052 դրամ, այդ թվում սննդի համար՝ 1333 դրամ: 2013 թվականին՝ 7411 դրամ, այդ թվում սնունդի համար՝ 1182.2 դրամ: Այսպիսով, շուրջօրյա խնամքի հաստատություններում մեկ խնամվողի հաշվով մատուցվելիք ծառայության նվազագույն օրական միջին գինը 2012 թվականին 2011 թվականի համեմատ աճել է 3,1%-ով , 2013 թվականին 2012 թվականի համեմատ՝ 20,1%-ով;

Ստորև ներկայացվում է 2011-2013 թթ նախարարության համակարգի 6 մանկատանը, այդ թվում՝ մասնագիտացված մանկատներում խնամվող երեխաների թիվը.

| | Նախարարության համակարգի մանկատների թիվը, այդ թվում՝ | | Մանկատներում խնամվող երեխաների փաստացի թիվը | Այդ թվում մասնագիտացված մանկատներում խնամվող երեխաների փաստացի թիվը |
|---|---|---|---|---|
| | Ընդհանուր տիպի մանկատուն | Մասագիտացված մանկատուն | | |
| 2011թ. | 5 | 2 | 794 | 414 |
| 2012թ. | 5 | 2 | 724 | 419 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2013թ. | 3 | 3 | 719 | 506 |

Միաժամանակ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով պայմանավորված՝ ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը մասնագիտացված մանկատներում: 2012 թվականին շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող 724 երեխայից 419-ը, իսկ 2013 թվականին խնամվող 719 երեխայից 506-ը, մասնագիտացված մանկատների երեխաներ են:

2012 թ. ընթացքում համակարգի մանկատներ է ուղեգրվել 184 երեխա, այդ թվում 78 երեխա՝ մասնագիտացված մանկատներ, 2013 թ. ընթացքում՝ 183 երեխա, այդ թվում՝ 85 երեխա՝մասնագիտացված մանկատներ:

ՀՀ կառավարության կողմից 2012 թվականի հունիսի 7-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N 210-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 716-Ն որոշումը, համաձայն որի Մարի Իզմիրլյանի անվան ընդհանուր տիպի մանկատունը փոխել է իր գործունեության առարկան՝ իրականացնելով 0-18 տարեկան հաշմանդամ երեխաների սոցիալհոգեբանական վերականգնողական աշխատանքներ, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, նյութական ու կենցաղային պահանջմունքների բավարարումը, խնամքի և դաստիարակության ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը:

Հաhաստանի Հանրապետությունում իրականացվում է երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների ռազմավարություն, որը ենթադրում է ռիսկի ենթակա երեխաների խնամքի և սոցիալական հոգածության ենթահամակարգի ապակենտրոնացում, երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հզորացում, ինչը պայմանավորված է երեխայի ընտանիքում ապրելու իրավունքով: Խնդրի լուծման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի N804–Ն «Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հասատատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» 2005 թվականի մարտի 24-ի N381-Ն և 2006 թվականի նոյեմբերի 9-ի N1735-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման և շուրջօրյա հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման նպատակով շարունակվել է երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից երեխաների բեռնաթափման և այդ հաստատություններ երեխաների կանխարգելման գործընթացը: ՀՀ կառավարության կողմից հաստատված՝ 2012 թ. և 2013 թ. յուրաքանչյուր տարի հաստատություններից 50 երեխայի բեռնաթափման և հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման համար հատկացվել է 11.770.0 հազ. դրամ: 2012 թ. հաստատություններից բեռնաթափվել է 30 երեխա, կանխարգելվել է 20 երեխայի մուտքը հաստատություններ, 2013 թ. հաստատություններից բեռնաթափվել է 25 երեխա, կանխարգելվել 25 երեխայի մուտքը հաստատություններ՝ տարեց-տարի միջոցառումը նպատակաուղղելով հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելմանը:

Հաստատություններից երեխաների բեռնաթափման և հաստատություններ մուտքի կանխարգելման նպատակով՝ երեխաների կենսաբանական ընտանիքներին յուրաքանչյուր ամիս տրամադրվում է օժանդակության փաթեթ՝ 16170 դրամի չափով: 2012 թ. և 2013 թ. ՀՀ պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվել է 9,702.0 հազ.դրամ՝ 50 շահառուի համար:

2012-2013 թթ շարունակվել է ՀՀ-ում մանկատների շրջանավարտներին աջակցության և խորհրդատվության տրամադրումը: Այդ նպատակով յուրաքանչյուր տարի 40 շահառուի ծառայություն տրամադրելու համար 2012 թ. հատկացվել է 35,702.4 հազ. դրամ, իսկ 2013 թ.՝ 29,580.7 հազ. դրամ՝ 17,2%-ով պակաս, պայմանավարված որոշակի ծառայություններից օգտվող շահառուների թվով:

Կարևորելով այն հանգամանքը, որ կանխարգելման միջոցով պահպանվում է երեխա- ընտանիք-հասարակություն կապը, և մանկատներում չի ավելանում խնամվող երեխաների թիվը՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության «Երևանի «Զատիկ» մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 23-ի N209-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N1659-Ն որոշմամբ «Երևանի «Զատիկ մանկատուն» ՊՈԱԿ-ը դադարել է գործել որպես մանկատուն և 2013 թ. հունվարի 1-ից գործում է որպես «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ցերեկային և ժամանակավոր խնամք:

2013 թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվել է «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 100 երեխայի տրամադրել ցերեկային խնամք և 3-18 տարեկան 20 երեխայի՝ մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

Նախարարության համակարգի երեխաների 2 սոցիալական հոգածության կենտրոնի և սոցիալական աջակցության կենտրոնի կողմից ցերեկային խնամքի ծառայություններ են տրամադրվում ռիսկի ենթակա 6-18 տարեկան շուրջ 300 երեխայի և նրանց ընտանիքներին:

ՀՀ 2012 թ. պետական բյուջեով հաստատված 250 երեխայի փոխարեն փաստացի ծառայություններ են տրամադրվել 224 երեխայի, 2013 թ.՝ 300 երեխայի փոխարեն՝ 260 երեխայի: 2012 թ. համեմատ 50 երեխայի թվի ավելացումը պայմանավորված է «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնում» ցերեկային խնամք ստացող երեխաների թվի ավելացմամբ:

ՀՀ պետական բյուջեից ցերեկային խնամքի հաստատություններին հատկացված ֆինանսական միջոցները տարեցտարի աճել են՝ պայմանավորված սնունդի համար նախատեսված գումարի աճով: 2012 թ. հատկացվել է 184,962.5 հազ. դրամ, 2013՝ 217,306.4 հազ. դրամ: Մեկ խնամվողի հաշվով մատուցվելիք ծառայության նվազագույն օրական միջին գինը 2012 թ. կազմել է 2959 դրամ, այդ թվում սնունդի համար՝ 608.5 դրամ: 2013 թ.՝ 3509.3 դրամ, այդ թվում սնունդի համար՝ 726.92 դրամ՝ մոտ 20,0% ավելի:

Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոնի» կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր խնամքի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից 2012 թ. հատկացվել է 25,952.6 հազ.դրամ և 2013 թ.՝ 36,435.7 հազ. դրամ՝ յուրաքանչյուր տարի 20 երեխայի համար: 2012 թ. փաստացի խնամք է տրամադրվել 10 երեխայի, 2013 թ.՝ 17 երեխայի:

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության երեխաների խնամքի 4 ցերեկային կենտրոնները՝ Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի, շարունակում են ցերեկային խնամքի ծառայություններ տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին, ինչպես նաև աջակցել նրանց ընտանիքներին: Նշված կենտրոններն աջակցություն են ստանում ՀՀ պետական բյուջեից՝ աշխատակցներին տրամադրվում է աշխատավարձ: 2012 թ. հատկացվել է 51,338.4 հազ. դրամ, 2013 թ.՝ 51,835.6 հազ. դրամ՝ 84 աշխատակցի աշխատավարձեր՝ յուրաքանչյուր տարի 250 երեխայի ծառայությունների մատուցման համար:

2012-2013 թթ շարունակվել է իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը:

ՀՀ պետական բյուջեից շուրջօրյա խնամքի հաստատություններին հատկացված ֆինանսական միջոցները տարեցտարի աճել են՝ պայմանավորված սնունդի համար նախատեսված գումարի աճով, փափուկ գույքի ավելացմամբ և այլն: 2012 թվականին հատկացվել է 999,943.5 հազ.դրամ և 2013 թ.՝ 1,005,807.7 հազ.դրամ՝ յուրաքանչյուր տարի 800 երեխայի շուրջօրյա խնամքի իրականացման համար:

ՀՀ 2012 թ. պետական բյուջեով հաստատված 800 երեխայի փոխարեն փաստացի խնամվել է 700 երեխա, 2013 թ. 800 երեխայի փոխարեն՝ 766 երեխա, պայմանավորված երեխաների հաճախելիությամբ: Մեկ խնամվողի հաշվով մատուցվելիք ծառայության նվազագույն օրական միջին գինը 2012 թ. կազմել է 3425 դրամ, այդ թվում սնունդի համար՝ 1335 դրամ: 2013 թ.՝ 3351 դրամ, այդ թվում սնունդի համար՝ 1300 դրամ:

ՀՀ մանկատներում խնամվող՝ դպրոցում սովորող երեխաները ապահովվում են անձնական մանր ծախսեր կատարելու համար անհրաժեշտ գումարով, ինչի նպատակն է սովորեցնել երեխային խելամիտ և արդյունավետ օգտագործել ունեցած գումարը: ՀՀ պետական բյուջեից 2012 թ. հատկացվել է 9,000.0 հազ. դրամ՝ 7-18 տարեկան 264 երեխայի և 2013 թ.՝ 6,168.0 հազ. դրամ՝ 7-18 տարեկան 202 երեխայի գրպանի գումար տրամադրելու համար: 2012 թ. փաստացի գրպանի գումար է տրամադրվել 196 դպրոցական տարիքի երեխայի, 2013 թ.՝ 117 երեխայի, 79-ով պակաս, ինչը պայմանավորված է մանկատների բեռնաթափման քաղաքականության իրականացմամբ:

2012-2013 թթ շարունակվել է ՀՀ-ում մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրումը: ՀՀ պետական բյուջեից 55 շահառուի (յուրաքանչյուր տարի՝ 40 միանվագ դրամական օգնություն և 15 կրթաթոշակ) համար 2012 թ. հատկացվել է 3,800.0 հազ.դրամ, իսկ 2013 թ.՝ 2,800.0 հազ.դրամ: Փաստացի 2012 թ. կրթաթոշակ և դրամական օգնություն է տրամադրվել 23 շահառուի, 2013 թ՝. 37: Գումարի նվազեցումը պայմանավորված է միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների թվով:

2012-2013 թթ շարունակվել է իրականացվել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքն ու դաստիարակությունը խնամատար ընտանիքներում: ՀՀ պետական բյուջեից խնամատար ընտանիքներին հատկացված ֆինանսական միջոցները տարեցտարի աճել են՝պայմանավորված նվազագույն աշխատավարձի աճով, ինչպես նաև մանկատան որոշակի հոդվածների համապատասխան՝ երեխայի խնամքի գումարի հաշվարկով: 2012 թ. հատկացվել է 28,207.0 հազ. դրամ և 2013 թ.՝ 29,129.0 հազ դրամ՝ յուրաքանչյուր տարի 25 երեխայի խնամքի իրականացման համար: 2012 թ. փաստացի խնամվել է 23 երեխա, 2013թ.՝ 19 երեխա:

ՀՀ պետական բյուջեից 2012-2013 թթ յուրաքանչյուր տարի շենքի վարձակալության համար հատկացվել է 6,624.0 հազ.դրամ՝

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրվել է «Հայաստան-պարենային ապահովության ծրագիր 2010» ծրագրի ֆինանսավորման Համաձայնագիր, որը ուժի մեջ է մտել 2011 թ. դեկտեմբերի 28-ին: 2012 թվականին, ըստ Համաձայնագրի նախապայմանների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացրել է մի շարք աշխատանքներ, մասնավորապես, մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2012 թվականի դեկտեմբերի 27-ին հաստատվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների

ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1694-Ն որոշումը, որը բխում է Համաձայնագրի հավելում 2-ի հատուկ պայման 2-ի կատարման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 1055-Ն որոշման հավելված 2-ի 60-րդ կետի պահանջից:

ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի հիմնական նպատակն է ապահովել երեխայի բարեկեցիկ կյանքն ընտանիքում և հասարակության մեջ: Ռազմավարական ծրագրի միջոցառումները ներառում են սոցիալական պաշտպանության, առողջապահության, կրթության, մշակույթի և անչափահասների գործերով արդարադատության ոլորտները, որոնք ուղղված են երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի բարելավմանը, համայնքներում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հարցերով զբաղվող մասնագետի պաշտոն նախատեսելու նպատակահարմարությունը, խոցելի երեխաներին հասարակությանն ինտեգրելու մեխանիզմներին, ինչպես նաև հաստատությունների համար այլընտրանքային ծառայությունների ստեղծմանը:

Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N1694-Ն որոշման հավելված 2-ի 10-րդ կետի պահանջով ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարվել են փոփոխություններ. «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն: Նախագծի ընդունումը պայմանավորված է սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով: Առաջարկվող փոփոխությունների և լրացումների անհրաժեշտությունը բխում է երեխաների պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումներից և երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման առաջնահերթությունից:

ՀՀ կառավարության 2012 թվականիդեկտեմբերի 27-ի N1694-Ն որոշման հավելված 2-ի 2-րդ կետի պահանջով մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ մի շարք հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպելու /բեռնաթափում/ և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելման ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագիծը: Այն բխում է երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման, հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման նպատակից:

ՀՀ կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի N1694-Ն որոշման հավելված 2-ի 1-ին կետի պահանջով մշակվել և շահագրգիռ նախարարությունների կարծիքին է ներկայացվել «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի մշակումը պայմանավորված է երեխաների պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումներով՝ նպաստելու շրջանավարտների հետագա կյանքի ինքնուրույն կազմակերպմանը և ինտեգրմանը հասարակությանը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել և ներկայացվել է շահագրգիռ գերատեսչություններ՝ կարծիքի: Նախագծով առաջարկվում է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող «Երեխաների խնամքի կենտրոն» նոր տիպի

հաստատության ստեղծումը, ինչով պայմանավորված կնվազի հաստատությունում գիշերող երեխաների թիվը: Նախագծի ընդունումը կնպասի երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմանը:

Ի կատարումն 2013-2015 թվականների «Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի կազմակերպման» Ազգային ծրագրի 38-րդ կետի և Թրաֆիքինգի հարցերով խորհրդի 2013 թվականի հուլիսի 2-ի նիստի արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետի հանձնարարականի պահանջների՝ մշակվել և Թրաֆիքինգի հարցերով խորհրդին է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին միանվագ դրամական փոխհատուցման նշանակման և տրամադրման» կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Այն նպատակաուղղված է ԵԽ կոնվենցիայի պահանջների, Հայաստանի Հանրապետության միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը, ապահովում է թրաֆիքինգի հանցագործությունից տուժած մարդու և քաղաքացու փոխհատուցում ստանալու իրավունքը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան և կնպաստի իրավական, կազմակերպչական և ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդմանը և նոր մեխանիզմների ստեղծմանը:

**Առողջապահության ոլորտում** մոր և մանկան առողջության պահպանումը կարևորվում են ազգային մակարդակում և որպես գերակայություն արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ռազմավարական և ծրագրային մի շարք փաստաթղթերում:

Տարեկան ծրագրի նպատակը և խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

- Երեխաների և դեռահասների առողջության և սնուցման կարգավիճակի բարելավում, առողջ աճի և զարգացման ապահովում, պատվաստումներով ընդգրկվածության բարձր մակարդակի պահպանում և հիվանդությունների կանխարգելում, երեխաների հիվանդացության և մահացության ցուցանիշների նվազեցում, հաշմանդամության կանխարգելում:
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ 1000-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Երեխաների և դեռահասների առողջության ու զարգացման ազգային ռազմավարությանը և դրա ներդրման. գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» թիվ 37 արձանագրային որոշմամբ հաստատված ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2015 թ. համար բյուջեով նախատեսված ծրագրերի ներդրման ապահովումը:

Ծրագրի խնդիրն է՝

1. Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության գծով՝

ա/ Երեխաների ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության կազմակերպումը լրիվ ծավալով: Այն իր մեջ ներառում է՝

տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից մինչև 18 տարեկան երեխաների զարգացման և առողջության հսկողությունն ու բուժօգնության իրականացումը, այդ թվում՝

- առողջ երեխայի հսկողությունը՝ աճի և զարգացման գնահատմամբ,
- հիվանդությունների կանխարգելման միջոցառումները՝ ներառյալ պատվաստումների իրականացումը, հիվանդությունների վաղ հայտնաբերումը և հիվանդ երեխայի բժշկական օգնությունը.

- ծնողների հետ տարվող առողջապահական կրթման և քարոզչական աշխատանքների իրականացումը՝ երեխայի խնամքի, սնուցման և հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով:

բ/ Երեխաների նեղ մասնագիտական բուժօգնության իրականացումը և լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացումը:

գ/ Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում, ըստ անհրաժեշտության, երեխաների անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից:

դ/ Բուժքույրերի կողմից դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ապահովումը՝ տարածքային սպասարկման պոլիկլինիկայի ղեկավարության և պատասխանատվության ներքո:

ե/ Երեխաների բերանի խոռոչի հիգիենայի ծրագրի իրականացումը և ստոմատոլոգիական օգնության կազմակերպումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչը, «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագրի շրջանակներում համապատասխան տարիքային խմբի երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անվճար ստոմատոլոգիական խորհրդատվության և/կամ բուժման ուղեգրի ձևը հաստատելու մասին» թիվ 45-Ն հրամանով սահմանված կարգի և ծավալների:

զ/ 15 տարեկան աղջիկների վերարտադրողական առողջության հետազոտումը, ըստ անհրաժեշտության՝ բուժօգնության կազմակերպումը:

է/ 14-15 տարեկան արական սեռի անձանց նախազորակոչային տարիքի պատանիների առողջական վիճակի գնահատումը և բուժօգնության կազմակերպումը լրիվ ծավալով:

ը/ Դիսպանսերային հսկողության և բուժման իրականացումը՝ պոլիկլինիկաների համապատասխան մասնագիտական կաբինետների և մասնագիտացված բժշկական հիվանդանոցների, կենտրոնների, միավորումների, համալիրների դիսպանսերային ստորաբաժանումների կողմից:

թ/ Արտահիվանդանոցային պայմաններում վերականգնողական բուժական ծառայությունների մատուցումը համապատասխան պայմաններ ունեցող վերականգնողական կենտրոններում (ստորաբաժանումներում):

2. Հիվանդանոցային բուժօգնության գծով՝

- երեխայի առողջության պետական հավաստագրի ծրագրի շարունակական իրականցումը, ներառյալ մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումը
- սոցիալապես անապահով և հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացումը՝ անկախ հիվանդության ախտորոշումից
- սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող առանձին հիվանդություններով (հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ, սեռավարակներ, տուբերկուլյոզ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, ինֆեկցիոն հիվանդություններ և այլն) տառապող երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության ապահովումը՝ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի նպատակային ծրագրին համապատասխան,

- մինչև 18 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում (որոնց ցանկերը հաստատվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից) բուժօգնության ապահովումը հիվանդանոցային բուժկազմակերպություններում,
- նորածնային սկրինինգների իրականացումը (ֆենիլկետոնուրիայի, բնածին հիպոթիրեոզի, լսողության և անհասության ռեթինոպաթիայի սկրինինգ)
- երեխաների արտագնա հիվանդանոցային անհետաձգելի բուժօնության ծառայությունների կազմակերպումը:

3. Վերականգնողական-առողջարանային բուժման գծով՝

- սոցիալապես անապահով և հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված երեխաների (անկախ տարիքից) և մինչև 7 տարեկան խրոնիկ հիվանդ երեխաների (անկախ սոցիալական կարգավիճակից) վերականգնողական-առողջարանային բուժման ապահովումը համապատասխան բուժկազմակերպություններում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հաստատված ծավալներով:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հաշվարկային ցուցանիշի, տարածաշրջանում մանկական մահացությունների միտումների վերլուծությունը փաստում է, որ Հայաստանին հաջողվել է վերջին 15 տարվա ընթացքում 46 տոկոսով կրճատել մանկական մահացության ցուցանիշը:

Ըստ միջազգային փորձագիտական գնահատականների, 2005 թվականից Հայաստանը ճանաչված է որպես ԱՊՀ այն եզակի երկրներից մեկը, որին կհաջողվի շարունակաբար իջեցնել երեխաների մահացությունը և հասնել 2015 թվականի համար սահմանված հազարամյակի նպատակներին (ՄՄՑ իջեցում 2/3-ով), եթե այդ ոլորտում հետագայում ապահովվեն շարունակական զարգացումների նույն միտումները: Սակայն միտումների հետագա զարգացումների գնահատականը փաստում է, որ իրավիճակը մանկական մահացության անկման առումով վատացել է: Մինչև 2015 թվականը հարկ կլինի այն նվազեցնել ևս 43%-ով, ինչը ենթադրում է, որ 2015 թվականի համար սահմանված նպատակը դժվար հասանելի է և այն հնարավոր է միայն առկա ռեսուրսների համախմբման և այդ ոլորտում լրացուցիչ ներդրումների իրականացման պայմաններում:

Ըստ ԱՎԾ նախնական տվյալների, 2012 թ. մանկական մահացության ցուցանիշը կազմել է 10,7‰, ինչը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ցածր է շուրջ 10 տոկոսով:

Այս ոլորտի ազգային ռազմավարությունը պետք է ուղղվի ունեցած հաջողությունների պահպանմանը և հետագա ներդրումների և զարգացումների ապահովմանը՝ որպես երեխաների առողջության բարելավման գրավական:

2011 թ.-ին հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց և 2012 թ. շարոնակվում է իրականացվել երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգը, որի ներդրման երաշխիք հանդիսացավ երեխայի հիվանդանոցային բուժօգնության ծրագրի ֆինանսավորմանն ուղղվող բյուջետային միջոցների կրկնակի ավելացումը: Արդյունքում, հիվանդանոցային ծառայությունների իրականին մոտ արժեքի փոխհատուցման և բուժաշխատողների աշխատավարձի շուրջ 2 անգամ բարձրացման միջոցով հնարավորություն ստեղծվեց բարելավել երեխաների հիվանդանոցային օգնության մատչելիությունը և որակը, նվազեցնել համակարգում տեղ գտած ոչ պաշտոնական վճարումների գործելակերպը, իսկ վերջնական արդյունքում ակնկալել մանկական հիվանդանոցային մահաբերության կրճատում:

Ծրագրի ներդրման արդյունավետության այլընտրանքային գնահատման արդյունքները վկայում են ոչ պաշտոնական վճարների ավելի քան 4-5 անգամ կրճատման մասին: Հարցմանը մասնակից և հավաստագրերից օգտված մայրերի 79% Երևանում և 91% մարզերում նշել են, որ գոհ են մատուցված ծառայություններից, քանի որ ստացել են անվճար բուժօգնություն:

Երեխայի հավաստագրի ծրագրի ներդրման արդյունքում բարձրացել է երեխաների հիվանդանոցային բուժօգնության որակն ու մատչելիությունը, ինչի ապացույցն է հիվանդանոցային դիմելիության զգալի աճը և հոսպիտալացման դեպքերի ավելացումը շուրջ 18%-ով:

Արագ արձագանքման արտագնա ծառայության միջոցով 2011 թ.-ի ընթացքում անհետաձգելի բուժօգնություն է տրամադրվել մարզերի բուժհաստատություններին, կատարելով 285 կանչի սպասարկում (այդ թվում նորածնային), ինչը որոշակիորեն նպաստել է մանկական մահացության դեպքերի կրճատմանը:

Հանրապետության մարզերում ընդլայնվել են Երեխայի զարգացման գնահատման և վերականգնողական ծառայությունները, 2012 թ. ընթացքում բացվել է ևս 2 մարզային կենտրոն՝ Կապանի ԲԿ-ում և Երևանի քաղաքապետարանի N9 մանկական պոլիկլինիկայում:

Շարունակում են իրականացվել երեխաների մահացության, հիվանդացության և հաշմանդամության կանխարգելմանն ուղղված մի շարք ծրագրեր, այդ թվում ֆենիլկետոնուրիայի, հիպոթիրեոզի, անհասության ռետինոպաթիայի և լսողության նորածնային սկրինինգի իրականացման ծրագրերը, որոնք թույլ են տալիս դեռ վաղ հասակից ձեռնարկել միջոցառումներ այս երեխաների բուժման ուղղությամբ և կանխարգելել դրանցով պայմանավորված հաշմանդամությունը:

Ընդլայնվել են բնածին ախտաբանությունների վաղ հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգ ծրագրերը, ընդ որում 2013 թ. հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը իրականացվել է

_ բնածին հիպոթիրեոզ՝ 37956 հետազոտություն, հայտնաբերվել հիվանդ 16երեխա, որոնք ստանում են անվճար բուժօգնության

_ ֆենիլկետոնուրիա՝ 19551 հետազոտություն, հայտնաբերվել է հիվանդ 5 երեխա, որոնք ստանում են անվճար բուժօգնություն և հատուկ սնունդ

_ լսողության սկրինինգ՝ 9370 հետազոտություն, հայտնաբերվել է նեյրասենսոր ծանրալսությամբ 8 երեխա, որոնց կիրականացվի լսողության պրոթեզավորում կամ ականջի խխունջի պատվաստում

_ անհասության ռետինոպաթիայի սկրինինգ՝ հետազոտվել է 762 անհաս երեխա, կուրության կանխարգելման նպատակով հայտնաբերված 13 երեխային կատարվել է լազերային վիրահատություն, 11-ին՝ դեղորայքային բուժում:

2014 թվականի ընթացքում շարունակաբար իրականացվում են ծրագրեր՝ երեխաների ստոմատոլոգիական խնդիրների առաջնային կանխարգելման, աղջիկների վերարտադրողական առողջության գնահատման ու բուժման ուղղությամբ: Խրոնիկ հիվանդ և հաշմանդամ երեխաների վերականգնողական բուժման շրջանակներում հաշմանդամ երեխաները ստացել և շարունակում են ստանալ առողջարանային վերականգնողական բուժում «Արարատ» մանկական առողջարանում, «Ապարան» առողջարարական կենտրոնում և «Օշական» առողջարանային-վերականգնողական կենտրոնում:

Շարունակաբար իրականացվում է «Իմունականխարգելման ազգային ծրագիրը», նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում Հայաստանի Հանրապետությունում նոր պատվաստանյութի ներդրման ուղղությամբ:

Մայրական մահացության իրավիճակը

Զգալի աշխատանք է կատարվել ծնունդների և մանկական մահացության գրանցման գործընթացի բարելավման ուղղությամբ:

Վերջինիս միջին եռամյա ցուցանիշների համեմատությունը վկայում է, որ Հայաստանում վերջին 15 տարվա ընթացքում մայրական մահացության մակարդակը շարունակաբար իջել է: Մայրական մահացության Հայաստանի ցուցանիշն ավելի ցածր է ԱՊՀ և տարածաշրջանի երկրների միջին մակարդակից, սակայն 4 անգամ բարձր է եվրոպական երկրների համանուն ցուցանիշի միջին մակարդակից: Կատարվել են աշխատանքներ՝ ծննդօգնության բուժհաստատությունների ըստ մակարդակների դասակարգման, ուղեգրման համակարգի բարելավման, բարձր ռիսկի խմբի հղիների նախածննդյան խնամքի և ծննդօգնության ծառայությունների որակի, մատչելիության ապահովման ուղղությամբ, ինչը միտված է նվազեցնել մայրական մահացության դեպքերը:

2006-2008 թթ մայրական մահվան միջին եռամյա ցուցանիշը կազմել է 28,2/100 000 կենդանածնության հաշվով, իսկ 2009-2011 թթ համանուն ցուցանիշը կազմել է 15,7, այսինքն կրճատվել է մոտ 1,7անգամ, իսկ 2010-2012 թթ ցուցանիշը կազմել է 13/100 000, այն կրճատվել է մոտ 2.2 անգամ:

Համաձայն ժողովրդագրության և առողջության հարցերի 2010 թ. կատարած հետազոտության նախնական զեկույցի տվյալների նախածննդյան գոնե մեկ այց կատարած հղիների ցուցանիշը աճել է 6%-ով և դարձել է 99%, իսկ ստացիոնար ծննդաբերությունների ցուցանիշը դարձել է 99.4%:

2014 թվականի անցած ամիսների ընթացքում շարունակաբար մշտադիտարկման է ենթարկվել ծննդօգնության և երեխայի պետական հավաստագրի ծրագրերով իրականացման աշխատանքները, որոնք ուղղված են երեխաների և կանանց համար առավել մատչելի և իրապես անվճար ծառայությունների մատուցմանը:

**Կրթության ոլորտում** պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու՝ իր հակումներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթությունը՝ հասարակության և հանրապետության տնտեսության արդի կարիքներին ու պահանջներին համապատասխան:

Տարեկան ծրագրի նպատակներն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

- բարելավել նախադպրոցական կրթության ծառայությունների որակն ու մատչելիությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով նախադպրոցական կրթության մեջ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ընդգրկման ավելացմանը,
- ընդլայնել դպրոցահասակ երեխաների, ներառյալ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ հանրակրթական դպրոցներում,
- նպաստել սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, գեղագիտական, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Ծրագրի խնդիրն է՝

- փոքր է նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը, շատ համայնքներում չկան նախադպրոցական կրթական ծառայություններ,

- հանրակրթական դպրոցներն ունեն սահմանափակ կարողություններ ապահովելու բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը,
- սովորողները չունեն բավարար իրազեկվածություն՝ մասնագիտական կողմնորոշման հարցերի շուրջ,
- բավարար չեն սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման ու նախասիրությունների դրսևորման համար առկա պայմանները, ինչպես նաև սահմանափակ են երեխաների ազատ ժամանցի ու հանգստի կազմակերպման համար պետական հատկացումները, ինչի արդյունքում այդ ծառայությունները շատերի համար դառնում են անհասանելի:

Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով ընդունվել է «Հայաստանի հանրապետության կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը, որի հիմքում դրվել են նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը:

Հայաստանն այսօր որդեգրել է միջազգային կրթական համակարգին ինտեգրվելու քաղաքականություն, որը ենթադրում է կրթության կառուցվածքի և բովանդակության համապատասխանեցում ժողովրդավարական հասարակության ու շուկայական տնտեսության պահանջներին: Հատկապես ընդգրկուն է համագործակցությունը հանրակրթության ոլորտում, ուր իրականացվող բարեփոխումների արդյունքում անցում է կատարվում 12-ամյա միջնակարգ կրթակարգին: ՀՀ կառավարության 2011 թ. հուլիսի 28-ի N1088-Նորոշմամբ հաստատվել է հանրակրթության պետական ափորոշիչը, մշակվել են նոր առարկայական չափորոշիչներ ու ուսումնական ծրագրեր, հրատարակվել են նոր դասագրքեր: Ձևավորվել է առանձին գործող ավագ դպրոցների ցանցը, որում ներառված է 107 ավագ դպրոց: Ներդրվել է սովորողների գիտելիքների գնահատման նոր համակարգը, բոլոր առարկաների գծով անցկացվում են ավարտական և բուհի ընդունելության միասնական քննություններ: Շարունակվել են դպրոցները համակարգչային սարքավորումներով համալրման աշխատանքները, ստեղծվել են համակարգչային հայալեզու էլեկտրոնային ծրագրեր, դասագրքեր, ուսուցողական նյութեր և այլն:

ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N33 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարության և փորձնական ծրագրի համաձայն, 2014 թվականին Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում կիրականացվեն դպրոցական սննդի փորձնական ծրագրեր, որոնցում կներառվեն նշված 2 մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված սովորողները: 2014 թվականին ՀՀ պետական բյուջեից «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է հատկացնել 126.4 մլն. դրամ: Միաժամանակ մինչև 2016 թվականը նախատեսվում է շարունակել ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՄԱԿ ՊՀԾ) կողմից իրականացվող դպրոցական սննդի ծրագիրը, ընդգրկելով հանրապետության 9 մարզերի շուրջ 65000 սովորողների, ուսումնական տարվա ընթացքում տարրական դպրոցում սովորողների համար կազմակերպելով մեկանգամյա սնունդ:

Առաջընթաց է նկատվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդհանուր հանրակրթական դպրոցներում ներգրավելու գործում: 2013-2014 ուստարում ներառական կրթություն փաստացի իրականացվել է 101 հանրակրթական դպրոցներում, իսկ ներառական կրթության մեջ ընդգրկվածների թիվը կազմել է 2612: ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանի համաձայն, 2014 թվականի սեպտեմբեր ամսից ընդլայնվելու է ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկը ևս 22 դպրոցով: Միաժամանակ ներառական կրթության փորձնական ծրագիր է իրականացվում

Տավուշի մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում: Նախարարության ռազմավարությունն այս բնագավառում ուղղված է մի կողմից հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով կընդլայնվեն հանրակրթական դպրոցներում և համայնքներում հատուկ մանկավարժական, սոցիալական, հոգեբանական ծառայությունները: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում:

Նախադպրոցական կրթության ոլորտում ՀՀ կրթության և գիտության նախարարության քաղաքականությունն ուղղված է առկա ներուժի պահպանմանը, դրանց զարգացման նախադրյալների ստեղծմանը և գործունեության ընդլայնմանը: Համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը կարգավորելու նպատակով ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ-ում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականների ռազմավարական ծրագիրը, որի հիման վրա էլ ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի նոյեմբերի 4-ին հաստատվել է «Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը ֆինանսավորելու մասին» N1427-Ն որոշումը: Նշված իրավական ակտով ՀՀ կառավարությունը, որպես ռազմավարական նպատակ, որդեգրել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համընդհանուր կրթության ապահովման պետական քաղաքականությունը: Նախատեսվում է այդ խմբի երեխաների ընդգրկվածությունը 2015 թվականին հասցնել 90 տոկոսի, որին հասնելու համար անհրաժեշտ է տարեկան մոտավորապես 7 տոկոսի չափով ընդգրկվածության մակարդակի աճ:

Նախադպրոցական հաստատությունները հիմնականում գործել են համայնքային ենթակայությամբ, և նշված ոլորտում մինչ 2011 թվականը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվել, այլ դրանք իրականացվել են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից, երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից:

Ոլորտին աջակցելու և ՀՀ տարբեր տարածքներում նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով հատկացվել են միջոցներ՝ ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ փորձնական ծրագիր իրականացնելու համար: «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում 2014 թվականին կշարունակվեն ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայությունների ներդրման միկրոծրագրերը՝ դպրոցին երե-խաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման ուղղությամբ: 2014 թվականին դրամաշնորհներ կհատկացվեն նախադպրոցական ծրագիր իրականացնող 14 հաստատությունների, որի արդյունքում նախադպրոցական կրթության մեջ լրացուցիչ կընդգրկվի շուրջ 350 երեխա: «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի ավարտից հետո՝ 2015-2019 թվականներին, նախատեսվում է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացնել «Կրթության բարելավում» նոր վարկային ծրագիրը:

Նախադպրոցական ծրագրերի (բացառությամբ Երևանում իրականացվելիք ծրագրերի) շարունակականության ապահովման համար հետագա տարիներին ընթացիկ ծախսերը կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: 2014 թվականին ՀՀ

պետական բյուջեից նախադպրոցական կրթության գծով հատկացվելու է 494.6 մլն. դրամ, որի արդյունքում նախադպրոցական կրթության մեջ կընդգրվի միջին տարեկան կտրվածքով 4364 երեխա:

Անշուշտ կարևորվում է նաև դաստիարակության համակարգի զարգացումը, ուսուցման ու դաստիարակության միասնականության ապահովումը: Այստեղ առանձնահատուկ շեշտադրում է արվել սովորողների համար ըստ հետաքրքրությունների գործունեություն ծավալելու հնարավորությունների ընձեռնմանը և լրացուցիչ կրթության ապահովմանը:

Անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկաներից, իսկ միջազգային օլիմպիադաներին Հայաստանը թիմային մասնակցություն է ունենալու «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն» և «Կենսաբանություն» առարկաներից:

Հանրակրթական դպրոցի 8-11-րդ դասարաններում իրականացվել է «Առողջ ապրելակերպ» դասընթացի ուսուցում, սովորողները ձեռք են բերել առողջ ապրելակերպի գիտելիքներ ու կյանքի հմտություններ:

Ամառային ճամբարներում ու հանգստյան տներում կազմակերպվել է սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 4500 երեխաների ամառային հանգիստը:

Հանրակրթական դպրոցների շուրջ 72804 աշակերտների համար անցկացվել են ամենամյա հանրապետական սպորտային խաղեր՝ 9 մարզաձևերից: Մարզական խաղերի միջմարզային և հանրապետական փուլերին մասնակցել են շուրջ 2804 աշակերտներ:

Հանրապետության տարբեր մարզերում կազմակերպվել են դպրոցականների գեղագիտական ստեղծագործության մրցույթ-փառատոներ, նկարչական հանրապետական ու միջազգային մրցույթներ:

Նշված բոլոր ուղղություններով աշխատանքները կշարունակվեն նաև 2015 թվականին:

**<u>Մշակույթի ոլորտում</u>** երեխայի իրավունքների բաղկացուցիչ մաս է կազմում նրա գեղագիտական, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունների զարգացումը, գեղագիտական դաստիարակությունը, ինչպես նաև մշակութային արժեքների ճանաչումը:

Տարեկան ծրագրի նպատակներն ու խնդիրները

Ծրագրի նպատակն է՝

- երեխաների մշակութային մասնագիտական ուսուցմանը և գեղագիտական դաստիարակությանը պետական աջակցության ցուցաբերումը.
- երեխաների բազմաբովանդակ հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպումը.
- երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտումը և խթանումը.
- արվեստի և մշակույթի ոլորտներում բազմակողմանի և մասնագիտական գիտելիքների ուսուցանումը.
- արվեստի բնագավառում ստեղծագործող շնորհալի երեխաների ներգրավումը.
- մանկապատանեկան կինոյի, թատրոնի գործունեության զարգացման խթանումը.

- երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը և սոցիալապես անապահով խավի երեխաների ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցման նպաստումը.
- երիտասարդ սերնդի արվեստների և արհեստների ուսուցման ապահովումը:

Ծրագրի խնդիրն է՝
- գեղարվեստական կրթության մատչելիության ապահովում՝ «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակում ուսման վարձավճարների փոխհատուցման շարունակականությամբ,
- գեղարվեստական կրթական հաստատությունների բնականոն գործունեության ապահովում՝ երաժշտական գործիքների համալրմամբ, ուսումնամեթոդական աշխատանքների իրականացմամբ, ուսումնական նոր ծրագրերի և դասագրքերի մշակմամբ,
- ուսուցման մատչելիության ապահովում արտադպրոցական գեղարվեստական դաստիարակության շրջանակներում՝ մասնավորապես սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած մշակութային կրթության ապահովմամբ,
- երեխաների ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման պայմանների ստեղծումը, նպատակային ծրագրերի իրականացմամբ,
- ազգային և համաշխարհային մշակութային արժեքներին, ժողովրդական արվեստի լավագույն նմուշներին, դասական և ժամանակակից արվեստին հաղորդակցում՝ մշակութային միջոցառումների և գիտաճանաչողական ուղևորությունների իրականացմամբ,
- շնորհալի երեխաների ու երիտասարդների բացահայտում, նրանց կրթության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու ինքնադրսևորման համար պայմանների ապահովում՝ մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների, համերգների, «վարպետ-դասարանների» և այլ միջոցառումների կազմակերպմամբ:

Ակնկալվող արդյունքը
- ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ուսման վարձավճարների փոխհատուցումը նպատակաուղղված է գեղարվեստական կրթության մատչելիության ապահովմանը, կրթական հաստատությունների պահպանմանը և մշակույթի ոլորտի հետագա մասնագետներով համալրմանը:
- «Մշակութային կրթության աջակցման հիմնադրամի» կողմից մեթոդական աշխատանքների կազմակերպումը նպաստում է գեղարվեստական կրթական հաստատություններում ուսուցման որակի բարձրացմանը, կրթական նոր մեթոդների ներդրմանը, փորձի փոխանակմանը, վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը, ժամանակակից դասագրքերով համա-լրմանը, վարպետության դասընթացների միջոցով ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
- ՀՀ մշակույթի նախարարությունում ստեղծված ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկի համալրումը միտված է առավել նպատակային իրականացնել շնորհալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ու խթանմանը նպատակաուղղված ծրագրերը:

- «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում գիշերօթիկ, հատուկ դպրոցներում իրականացվում է հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաների արվեստների և արհեստների ուսուցում:
- «Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում» ծրագրի հիմնական նպատակն է նպաստել երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը և ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը:
- «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում ծրագրի իրականացմամբ ներկայացվում են ՀՀ բոլոր մարզերի շնորհալի երեխաների ստեղծագործական աշխատանքները (համերգ, ցուցահանդես):
- «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթի կազմակերպումը միտված է Հայաստանի հանրապետության և Արցախի լավագույն երգչախմբերի բացահայտմանը, նրանց կատարումները հանրությանը ներկայացմանը:
- Մանկական գրականության հրատարակումը նպաստում է մանուկների աշխարհայացքի ձևավորմանը, հայրենասիրական դաստիարակությանը, ազգային և համամարդկային արժեքների սերմանմանը, գրադարանների մանկական գրականության համալրմանը:
- Մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապետական փառատոնի անցկացումը նպաստում է մանկապատանեկան թատրոնի զարգացմանը, շնորհալի երեխաների հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը:
- Մանկական մուլտֆիլմերի նկարահանումը նպաստում է մանկական կինոյի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը և աշխարհայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը:
- Մանկապատանեկան կինոյի և անիմացիայի փառատոնի իրականացումը նպաստում է հայրենական կինոարտադրության խթանմանը, լավագույն ֆիլմերի հեղինակներին հայտնաբերմանը և խրախուսմանը:

Ռազմավարություն

- Երաժշտական և արվեստի դպրոցներին պետական աջակցության ցուցաբերման շարունակականության ապահովում.
- Արվեստի տարբեր ոլորտներում նպատակային ծրագրերի իրականացում.
- Միջազգային մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների մասնակցության նպատակով պատանի շնորհալի ստեղծագործողներին պետական աջակցության ցուցաբերման շարունակականության ապահովում.
- Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնի գործունեության ապահովում և հատուկ կարիքներ ունեցող երեխաների ինտեգրման խնդրին ուղղված նպատակային ծրագրերի մշակում.
- Մշակութային ծրագրերի իրականացման ընթացքում հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ապահովում:

ՀՀ մշակույթի նախարարությունը երեխաների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության բնագավառում միասնական քաղաքականություն իրականացնելու նպատակով ղեկավարվել է ՀՀ կառավարության 2014 թվականի մայիսի 19-ի N 511-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապե-տության կառավարության ծրագրի «2.4.5. Մշակույթը» բաժնի ուղղություններով, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, ՀՀ կառավարության 2004 թ. նոյեմբերի 18-ի N 47 արձանագրային որոշմամբ հաստատված «Գեղարվեստական կրթության հայեցակարգի» դրույթներով և ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 15-ի N

46 արձանագրային որոշմամբ հաստատված «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2013-2015 թվականների ծրագրով»:

Մշակութային քաղաքականությունը արտացոլում է մշակույթի և արվեստի բնագավառում քաղաքացու և մարդու մշակութային կյանքին մասնակցության, մշակութային և ստեղծագործական գործունեության իրականացման, մշակութային արժեքներին հաղորդակցման, գեղարվեստական կրթություն ստանալու և այդ կրթության ձևերն ու միջոցները ընտրելու հնարավորության իրավունքներն ու ազատությունները:

Անհատի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում

I. Մշակութային կրթության մատչելիության և որակի ապահովում

1) Գեղարվեստական կրթության մատչելիության ապահովման նպատակով ՀՀ կառավարության 2007 թ. հոկտեմբերի 11-ի N 1167-Ն որոշմամբ հաստատվել է «Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային նվագարանների գծով ուսուցում ծրագիրը», որի իրականացման ընթացքում բազմաթիվ դպրոցներում վերաբացվեցին ազգային նվագարանների բաժիններ: Ազգային նվագարանների ուսման վարձավճարների փոխհատուցումը հնարավորություն տվեց ապահովել ուսուցման մատչելիությունն ու վտանգված շատ մասնագիտությունների դասավանդումը: ՀՀ կառավարության 2009 թ. ապրիլի 16-ի N 529-Ն որոշմամբ ծրագրի շրջանակները ընդլայնվեցին՝ ներառելով նաև լարային և փողային նվագարանները: 2011-2013 թթ ծրագրի շրջանակում ընդգրկված են 144 դպրոցների 2443 սովորողներ, որից՝ 2004 ազգային, 164 լարային և 275 փողային նվագարանների բաժիններում սովորողներ:

2013 թ. գործընթացը համալրվեց «ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների շրջանառու հիմնադրամ» (ձեռք է բերվել և շնորհալի երեխաներին տրամադրվել է 73 երաժշտական գործիք) և «ՀՀ-ում շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացում և կատարելագործում» նպատակային ծրագրերով՝ համաձայն «Մանուկների և պատանիների գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության 2012-2015 թվականների պետական ծրագրի» N 2-ի հավելված 5-րդ կետի «Շնորհալի երեխաների բացահայտման և հետագա ուսուցման գործընթացում աջակցության ցուցաբերում» 3-րդ ենթակետի:

2) ՀՀ մշակույթի նախարարությունում 2008 թ. ստեղծվել է ՀՀ շնորհալի երեխաների տեղեկատվական բանկ, որտեղ ներառվել է Երևան քաղաքի, ՀՀ մարզերի և ԼՂՀ երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների շուրջ 560 շնորհալի երեխաներ: Շնորհալի երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացմանն է ուղղված միջազգային մրցույթներին և փառատոների տեղեկատվական բանկերում ընդգրկված երեխաների մասնակցության աջակցության ցուցաբերումը, մասնավորապես՝ 2008-2013 թթ. վերոնշյալ միջոցառումներին մասնակցել են շուրջ 250 շնորհալի երեխաներ և պատանիներ:

3) Մեթոդական աշխատանքների կազմակերպման նպատակով 2009 թ. 10 մարզերում գործում են մարզային մեթոդական կենտրոններ, որոնք տեղակայված են այդ նպատակով ընտրված հենակետային 33 դպրոցներում՝ յուրաքանչյուր մարզում մեկական երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց: Հենակետային դպրոցներում կազմակերպվում են մեթոդական աշխատանքներ՝ նոր ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի ներդրման, խորհրդատվական, առաջավոր փորձի փոխանակման աշխատանքներ, վարպետության և վերապատրաստման դասընթացներ:

4) Մանկական գեղարվեստական գրքերի հրատարակման, գրադարանային ֆոնդերի համալրման նպատակով «Աջակցություն գրականության հրատարակ-մանը» ծրագրով իրականացվում է «Մանկական գրականություն» ենթածրագիրը, որի շրջանակներում 2012 թ. հրատարակվել է 14 գիրք, 2013 թ.՝ 17 գիրք:

5) 2008 թ. միջոցներ են հատկացվում երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքների իրականաց-ման, ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և հրատարակման համար: 2012 թ. հրատարակվել է 26, 2013 թ.՝ 24 անուն հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների, ուսումնական և գիտաուսումնական գրականություն: Հրատարակված գրականությունն անվճար տրամադրվում է հանրապետության բոլոր համայնքների երաժշտական և արվեստի դպրոցներին:

6) 2010 թ. մշակվել և 2011 թ. հաստատվել են հանրապետության երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների համար միասնական օրինակելի ուսումնական պլաններ:

II. Հանգստի և ժամանցի կազմակերպմանն ուղղված ծրագրերի իրականացում

Երեխաների հանգիստը և ժամանցը բազմաբովանդակ կազմակերպելու համար իրականացվել են՝

1) «Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում մայրաքաղաքի և մարզ-կենտրոնների թանգարաններ, պատկերասրահներ, համերգային և այլ մշակութային կազմակերպություններ» ծրագիրը, որի հիմ-նական նպատակն է նպաստել երեխաների աշխարհայացքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, գեղագիտա-կան ճաշակի ձևավորմանը և ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը: Ծրագիրը շարունակական է և իրականացվում է 2008 թվականից:

2) «ՀՀ մարզերում շնորհալի երեխաների ու պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում և խթանում» ծրա-գիրը նպատակաուղղված է երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում սովորող երեխաների մասնագիտական կրթա-կան ծրագրերի առավել արդյունավետ ուսուցմանը, վարպետության դասընթացների միջոցով ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

3) «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օրեր մայրաքաղաքում» ծրագիրը, որն ուղղված է շնոր-հալի երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ու խթանմանը:

4) «Դպրոցականի ֆիլհարմոնիա» ծրագիրը, որը նպատակաուղղված է երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակությանը և բազմակողմանի զարգացմանը, դասական երաժշտության, ժողովրդական արվեստի, գեղանկարչության, թատրոնի հետ հաղորդակցմանը: 2007-2013 թթ. կազմակերպել են շուրջ 160 համերգ և տարաբնույթ այլ միջոցառումներ:

III. Պատանի ստեղծագործողների համար հանրապետական ու միջազգային մրցույթների, փառատոների, ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում

1) «Երգող Հայաստան» մանկապատանեկան երգչախմբերի հանրապետական մրցույթի նպատակն է երգչախմբային արվեստի ոլորտում պատանի ստեղծագործողների կարողությունների զարգացումը: Մրցույթի նախնական ընտրական փուլին մասնակցում են ՀՀ մարզերի (երաժշտական և հանրակրթական դպրոցների) մանկական երգչախմբերը, որտեղ լավագույնը ճանաչված երգչախմբե-րն ընդգրկվում են մայրաքաղաքում կազմակերպվող մրցույթի եզրափակիչ փուլին: 2013 թ. մրցույթին մասնակցել է 81 երգչախումբ՝ 2120 մասնակից:

2) «Վերածնունդ» պատանի երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոնի (Գյումրի) նպատակն է կատարողական արվեստում պատանի երաժիշտների կարողությունների զարգացումն ու խթանումը: 2012 թ. մասնակցել են ՀՀ-ից և 24 երկրներից 1365 երաժիշտ-կատարողներ և 2013 թ. ՀՀ-ից և 30 երկրներից՝ 2415 երաժիշտ-կատարողներ:

3) Յուրաքանչյուր տարի իրականացվում է մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնը, որին 2012-2013 թթ. համապատասխանաբար մասնակցել է 40 երկրից՝ շուրջ 130 ֆիլմ և 34 երկրից՝ շուրջ 113 ֆիլմ:

4) Մարզերում մշակութային կյանքի աշխուժացման, ինչպես նաև մայրաքաղաքից դեպի մարզեր մշակութային կյանքի ապակենտրոնացման նպատակով ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպվում են՝

-Մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապետական փառատոն, որի անցկացումը նպաստում է մանկապատանեկան թատրոնի զարգացմանը, շնորհալի երեխաների հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը և ավանդաբար անցկացվում է 2001 թվականից: 2012 թ. փառատոնին մասնակցել է (Հայ գրատպության 500-ամյակին նվիրված) 36 թատերախումբ (37 ներկայացում, 10000 հանդիսատես), 2013 թ. 42 թատերախումբ (30 ներկայացում, 10000 հանդիսատես): Փառատոնին մասնակցում են տիկնիկային թատերախմբեր ոչ միայն ՀՀ մարզերից և Երևանից, այլև Ջավախքից ու Արցախից:

-«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային թատերական փառատոն Դսեղում, որը 2005 թ. կազմակերպվում է ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղում: Փառատոնին 2012 թ. մասնակցել է 9 երկիր և ցուցադրվել է 37 ներկայացում, 2013 թ.՝ 24 թատրոններ՝ 16 պետությունից, ինչպես նաև թատրոններ Արցախից, Ջավախքից և Հայաստանի տարբեր մարզերից:

- «Հեքիաթին հյուր» գյուղական մանկահասակ բնակչության համար» ծրագիր ՀՀ մարզերում, որի շրջանակներում 2012 թ. այն իրականացվել է ՀՀ Վայոց ձորի մարզում՝ Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի կողմից: Մասնակցել են 3 քաղաքային և 21 գյուղական համայնքների շուրջ 4500 երեխաներ: 2013 թ. ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքի գյուղական մանկահասակ բնակչության համար կազմակերպվել է ամանորյա թատերականացված միջոցառում, որին մասնակցել է համայնքի ավելի քան 90 երեխա:

5) 2008 թ. անցկացվում է «ՀՀ ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոնը», որտեղ ներկայացվում է Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթը, ազգային երգն ու պարը: Փառատոնին մասնակցում են ՀՀ-ում բնակվող 11 ազգային միությունների ներկայացուցիչներ (այդ թվում նաև՝ մանկական համույթներ):

IV. Սոցիալապես անապահով և հատուկ կարիքներով երեխաներին մշակութային մասնագիտական ուսուցման և գեղագիտական դաստիարակության ասպարեզում պետական աջակցություն

ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդյունքում Երևանի 5 և Վանաձորի 2, Սպիտակի, Գավառի, Գյումրու 5 մասնաճյուղերի գիշերօթիկ հատուկ դպրոցներում հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով 614 երեխաներ ստանում են արվեստի և արհեստների անվճար ուսուցում: Կենտրոնի կողմից երեխաներին անվճար տրամադրվում են նյութեր, գործիքներ, իսկ դասընթացի ավարտից հետո՝ վկայականներ: Կազմակերպվում են նաև համերգներ, ցուցահանդեսներ:

V. Մանկական մուլտֆիլմերի նկարահանում

Մանկական մուլտֆիլմերի նկարահանումը նպաստում է մանկական կինոյի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը և աշխարհայացքի ընդլայնմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը: Տարեկան պետական աջակցությամբ երեխաների համար նկարահանվում է 4-5 մուլտֆիլմ:

**<u>Արդարադատության ոլորտում</u>** երեխաների իրավունքերի պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրով նախատեսում է անչափահասների (իրավախախտ, վկա, տուժող) գործեր քննող դատավորների, անչափահասների գործերով զբաղվող դատախազների, քննիչների, անչափահասների գործերով ոստիկանների, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի անձնակազմի և փաստաբանների վերապատրաստումներ, որոնց արդյունքում ակնկալվում են անչափահասների գործերով արդարադատության բնագավառում կլինեն մասնագիտացված տարբեր դերակատարներ (դատավորներ, դատախազներ, քննիչներ, անչափահասների գործերով ոստիկաններ, փաստաբաններ և այլն) ինչպես նաև, օրենսդրության վերանայում՝ անչափահաս ձերբակալվածներին և կալանավորվածներին արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետները կրճատելու, նրանց նկատմամբ գործերի լուծման արդարադատական միջոցների և այլընտրանքային պատիժների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, որի արդյունքում իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների համար կմշակվի առավել նպաստավոր օրենսդրություն:

**<u>ՀՀ կառավարության առընթեր ոստիկանությունը</u>** երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իր կարեվորոգույն տեղն ունի: Այն լայնածավալ աշխատանքներ է իրականացնում իրավախախտումներ կատարած անչափահասների շրջանում, ինչպես նաև նրանց նկատմամբ կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման և բացահայտման ուղղությամբ:

<u>Տարեկան ծրագրի նպատակներն ու խնդիրները</u>

Ծրագրի նպատակն է՝

իրավախախտումներ կատարած անչափահասների վերականգնողական կենտրոնների ցանցի ընդլայնումը, անչափահաս դատապարտյալների զբաղվածության ապահովումը:

Ծրագրի խնդիրն է՝

ինչպես անչափահասների կողմից, այնպես էլ նրանց նկատմամբ կատարվող հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխարգելման և բացահայտման աշխատանքները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիների ընթացքում նկատվում է վարքի շեղում ունեցող իգական սեռի ներկայացուցիչ հանդիսացող անչափահասների թվաքանակի աճ, ովքեր տարբեր կոնֆլիկտային իրավիճակների մեջ են հայտնվում շրջապատի, հարազատների և ընկերների հետ, ցուցաբերում հակահասարակական և ագրեսիվ վարքագիծ, կապեր հաստատում կասկածելի վարքագիծ դրսևորող անձանց հետ, հեռանում տանից և չեն ցանկանում բնակվել ծնողների հետ:

Նման վարքագիծ դրսևորող անչափահասների հետ կանխարգելման աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար պետք է իրականացնել երկարատև դաստիարակչական և սոցիալհոգեբանական աշխատանքներ, ինչի համար անհրաժեշտ է վերականգնողական կենտրոնի ստեղծումը:

Ներկայում շարունակվում է բանակցային գործընթացը պատկան մարմինների պատասխանատուների հետ՝ 12-ից 18 տարեկան իգական սեռի դժվար դաստիարակվող, շեղված վարքագծով և հատուկ դաստիարակության կարիք ունեցող անչափահասների համար վերականգնողական կենտրոնի ստեղծման նպատակով:

Շեղվող վարքագիծ դրսևորող անչափահասների համար ՀՀ ոստիկանության նախաձեռնությամբ, ԱՄՆ Պետդեպարտամենտի աջակցությամբ 2006 թվականից ի վեր Երևան (2 կենտրոն), Վանաձոր, Գյումրի, Ալավերդի, Իջևան, Ճամբարակ, Թալին, Կապան,

Աբովյան, Արտաշատ, Վաղարշապատ և Մեծամոր քաղաքներում գործում են համայնքային վերականգնողական կենտրոններ: Հիշյալ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի ժամկետի ավարտի կապակցությամբ կենտրոններին ֆինանսավորումը դադարեցվել է, սակայն վերականգնողական կենտրոնները շարունակում են իրենց գործունեությունը և ցանցը ընդլայնելու նպատակով՝ ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության նախաձեռնությամբ քննարկումներ են նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատուների հետ:

Հարկ է նշել, որ անցած ժամանակահատվածում վերականգնողական կենտրոններ է ուղղորդվել 1200-ից ավելի իրավախախտ և դժվար դաստիարակվող անչափահաս, որոնցից մոտ 800-ի նկատմամբ իրականացված աշխատանքներն արդեն իսկ տվել են դրական արդյունքներ, և հիշյալ կենտրոնների գործունեությունը, իրավախախտ անչափահասների շրջանում իրականացվող կանխարգելիչ աշխատանքներն իրականացնելու ընթացքում, դարձել է անհրաժեշտություն:

Անչափահասների շրջանում իրականացվող կանխարգելիչ աշխատանքների շրջանակներում ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից սպասարկվող վարչական տարածքներում գործող հանրակրթական դպրոցներում և ուսումնական հաստատություններում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ դպրոցականների հետ: Անց են կացվում զրույցներ տարբեր իրավական թեմաներով՝ «Անչափահասը և հանցագործությունը», «Թմրամոլությունը և անչափահասը», «Պետությունը և անչափահասը», «Օրենքը և անչափահասը», «Վնասակար սովորույթներ», «Անչափահասը փողոցում», «Բռնություն» և այլն: Պարբերաբար անցկացվող հանդիպումները, զրույցները անչափահասներին հնարավորություն է տալիս սովորել ու գիտենալ իրենց իրավունքներն ու պարտականությունները, իրազեկվելու ՀՀ-ում գործող օրենսդրական դաշտին և զերծ մնալ այլ անձանց շահագործումից և բռնության ենթարկվելու հնարավորությունից:

Անցկացվող հիշյալ միջոցառումները տալիս են դրական արդյունքներ:

Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

Անչափահասների կողմից կատարվող հանցագործություններն ու այլ իրավախախտումները նախականխելու, վերջիններիս իրավական գիտելիքների իմացության բարձրացման նպատակով, ՀՀ ոստիկանության համակարգում իրականացվող բարեփոխումների շրջանակներում 2014 թ. փետրվար-մարտ ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայության դպրոցական տեսուչների 15 հաստիքը համալրվեց ևս 47 հաստիքով: Ներկայում դպրոցական տեսուչները իրենց գործունեությունն են իրականացնում հանրապետության ավագ դպրոցներում:

## III. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2015 թվականի ընթացքում իրականացվելու են երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2015 թվականի տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները բխում են երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունից՝ նրանց խնամքի, բուժման և դաստիարակության համար նպաստավոր պայմանների ստեղծման, ֆիզիկական և մտավոր բնականոն զարգացման, հոգեբանական վերականգնման և արդյունավետ սոցիալականացման նպատակով:

## ՑԱՆԿ
## ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Ակնկալվող արդյունքները | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 6 մանկատանը կխնամվի 735 երեխա: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 2 248 518.2 հազ. դրամ |
| 2. | ՀՀ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաններին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում) և հաստատություններ երեխաների մուտքը կանխարգելելու ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակում ընտանիք կվերադառնա 50 երեխա, կկանխարգելվի 50 երեխայի մուտքը հաստատություններ: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 22 452.3 հազ. դրամ |
| 3. | Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունն | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 16 352.5 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | երի շրջանավարտներին» ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 13 շահառուի: | | |
| 4. | Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի երեխաների սոցիալական հոգածության 3 կենտրոնում 300 երեխայի կտրամադրվեն համապատասխան ծառայություններ: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 237 066.0 հազ. դրամ |
| 5. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 20 երեխայի կտրամադրվի մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 39 378.0 հազ. դրամ |
| | Երեխաների գիշերօթիկ խնամքի և | Հայաստանի Հանրապետության | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6. | պաշտպանության ծառայություններ | աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | նախարարության համակարգի 8 գիշերօթիկ հաստատությունում կխնամվի 800 երեխա: | | պետական բյուջե 1 092 124.1 հազ. դրամ |
| 7. | Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Տավուշի մարզում «Հույսի կամուրջ» ՀԿ-ի 4 ցերեկային կենտրոնում՝ Դիլիջանի, Իջևանի, Նոյեմբերյանի, Բերդի և նրանց հարակից գյուղերի՝ հաշմանդամություն կամ սոցիալ հոգեբանական: խնդիրներ և հատուկ կարիքներ ունեցող շուրջ 250 երեխայի մատուցվող ծառայությունների համար կտրամադրվի աշխատավարձ: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 70 000.6 հազ. դրամ |
| 8. | Հայաստանի Հանրապետության մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում: | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մանկատներում խնամվող դպրոցահասակ՝ 7-18 տարեկան 194 երեխայի կտրամադրվի մանր ծախսերի համար նախատեսված գումար /գրպանի/ծախս/: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 5 820.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 9. | Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կենսաբանական 100 ընտանիքի կտրամադրվի դրամական օժանդակություն: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 20 403.2 հազ. դրամ |
| 10. | Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Մանկատների 13 շրջանավարտի տրամադրվի միանվագ դրամական օգնություն: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 650.0 հազ. դրամ |
| 11. | Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Խնամատար ընտանիքումներում կիրականացվի 25 երեխայի խնամքը: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 38 144.3 հազ. դրամ |
| 12. | Հայաստանի Հանրապետությունում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման իրականացում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Կապահովվի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառումը: | 2015թ. ընթացքում | ֆինանսավորում չի պահանջվում |
| 13. | Հայաստանի Հանրապետությունունում ընտանիքի ազգային քաղաքականության ռազմավարության | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա է Հայաստանի Հաննրապետության կառավարություն ներկայացված | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հայեցակարգի ընդունման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն | | Ընտանիքի ազգային քաղաքականության ռազմավարության հայեցակարգի նախագիծը | | |
| 14. | Մշակել և փորձարկել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների համապարփակ և խորը գնահատման մեթոդաբանություն | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա է երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների և նրանց ընտանիքների կարիքների համապարփակ և խորը գնահատման մեթոդաբանությունը | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 15. | ՄԱԿ-ի՝ 2009թ. նոյեմբերի 20-ին ընդունած Երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղենիշներին համապատասխան Երեխաների ուղղորդման, ինչպես նաև երեխաների խնամքի ու | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա են Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված երեխաների ուղղորդման, ինչպես նաև երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններ | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պաշտպանության հաստատություններ ընդունելության կարգերի, մեխանիզմների ու չափորոշիչների հաստատման մասին որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն | | ընդունելության կարգերի նախագծերը | | |
| 16. | Հայաստանի Հանրապետության երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատությունների բեռնաթափման հայեցակարգի և վերջինիս իրականացման գործողությունների ծրագրի հաստատման մասին որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա են Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված Հայաստանի Հանրապետության երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատությունների բեռնաթափման հայեցակարգի և վերջինիս իրականացման գործողությունների ծրագրերի նախագծերը | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17. | Խնամատար ընտանիքների ձևավորման, գործունեության և վերահսկողության հարցերը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործմանն ուղղված առաջարկների նախագծի մշակում և ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա են Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված խնամատար ընտանիքների ձևավորման, գործունեության և վերահսկողության հարցերը կարգավորող իրավաօրենսդրական փոփոխված ակտերի նախագծերը | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 18. | Մշակել հատուկ կարիքներ ունեցող երեխաներին նույնականացնելու և երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններ ուղեգրելու միասնական կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա է Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաներին նույնականացնելու և երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններ ուղեգրելու նոր կարգի նախագիծը | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19. | Մշակել և ընդունել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական կարգավորման ոլորտում երեխաների խնամքի և պաշտպանության ուղղությամբ քաղաքականու թյան նպատակային, հասցեական և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ և հավաքման ենթակա ցուցանիշների հստակ ցանկ, ինչպես նաև այդ տեղեկությունների փոխանակման կարգ | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պետական կարգավորման ոլորտում երեխաների խնամքի ու պաշտպանության ուղղությամբ քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ և հավաքման ենթակա ցուցանիշների ամբողջական ու հստակ ցանկը, ինչպես նաև այդ տեղեկությունների փոխանակման կարգը | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 20. | Երեխայի իրավունքների պաշտպանության քաղաքականության իրազեկման աշխատանքների իրականացման ռազմավարական ծրագրի մշակում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Առկա է Հայաստանի Հանրապետության երեխայի իրավունքների պաշտպանության քաղաքականության իրազեկման ռազմավարական ծրագիրը | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 21. | Երեխաներին և դեռահասներին անհրաժեշտ բուժօգնության ծավալների ապահովում՝ պետական նպատակային ծրագրի շրջանակներում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Նպատակային ծրագրերին համապատասխան երեխաների և դեռահասների համար ապահովված է մատչելի և որակյալ բուժօգնություն | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 14 617 403.4 հազ. դրամ |
| 22. | Հիվանդանոցային բուժօգնության ոլորտում երեխաների առողջության պետական հավաստագրի ծրագրի շարունակական ներդրում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Յուրաքանչյուր տարի 0-7 տարեկան շուրջ 300 000 երեխա ըստ անհրաժեշտության հնարավորություն կունենա ստանալ մատչելի և որակյալ հիվանդանոցային բուժօգնություն: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 7 570 339.3 հազ. դրամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 23. | Իմունականխարգելման ազգային ծրագրի շարունակական իրագործում, ՀՀ կառավարության կողմից հաստատված գործողությունների ծրագրին համապատասխան | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Իմունիզացիայի ընդգրկման բարձր մակարդակի ձեռքբերում և պահպանում (առանձին պատվաստումների 95% և ավելի մակարդակի ապահովում): | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 751 000.0 հազ. դրամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 24. | Հաշմանդամ երեխաների համակարգված բուժօգնության և սպասարկման բարելավման ծրագրեր և միջոցառումներ: Վերականգնողական մարզային կենտրոնների ծրագրի ընդլայնում: | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Հաշմանդամ երեխաների համար վերականգնողական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 232 863.8 հազ. դրամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 25. | Ծննդօգնության պետական հավաստագրի ծրագրի շարունակական ներդրում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Տարեկան շուրջ 50 000 կին կստանա ծննդօգնության մատչելի և որակյալ ծառայություններ: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 6 922 000.8 հազ.դրամ |
| 26. | Կրծքով կերակրման աջակցությանն ուղղված օրենսդրության բարելավում և «Մանկանը բարեկամ» նախաձեռնության շարունակական ներդրում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | 1. Օրենքի նախագծի մշակում: 2. Վաղ հասակի երեխաների սնուցման կազմակերպման գործընթացը բարելավված է՝ բացառապես կրծքով սնուցման ցուցանիշն աճել է 15 տոկոսով: | 2015թ. ընթացքում | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 27. | Նախածննդյան խնամքի և բուժօգնության ծառայությունների բարելավում՝ | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | Նախածննդյան հսկողության վաղ հաշվառման ցուցանիշի բարձրացում 25%-ով: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 1 519 789.2 հազ.դրամ, օրենքով չարգելված այլ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 1) նորածնային ախտաբանությունների ներարգանդային ախտորոշման գործընթացի բարելավում, անտենատալ սկրինինգների ներդրում,<br><br>2) հղիության վաղ հաշվառման և նախածննդյան հսկողության ծառայությունների մատչելիության և որակի բարելավում | | Ցածր քաշով նորածինների ցուցանիշի նվազեցում 10%-ով: | | աղբյուրներ |
| 28. | Նյութափոխանակության ժառանգական հիվանդությունների և բնածին այլ շեղումների հայտնաբերմանն ուղղված նորածնային սկրինինգ ծրագրերի շարունականության ապահովում և ընդլայնում | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | ժառանգական և զարգացման բնածին ախտաբանություննե րով պայմանավորված հաշմանդամության կրճատում 5 %-ով: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 261 000.0 հազ. դրամ օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 29. | Հանրապետության բոլոր մարզերում նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնում՝ դպրոցին երեխաների պատրաստվածության | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան | Նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային և ծախսարդյունավետ մոդելների ներդրման միջոցով ՀՀ | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 630099.2 հազ. դրամ, օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման նպատակով | | մարզերում լրացուցիչ ընդգրկվել է շուրջ 7000 երեխա, այդ թվում՝ «Կրթության բարելավում» վարկային ծրագրի նախադպրո ցական միկրոծրագրերի շրջանակներում ընդգրկվել է շուրջ 1000 երեխա, ՀՀ պետական բյուջեի միջոցներով՝ ՀՀ մարզերում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվել է շուրջ 6000 երեխա: | | |
| 30. | Հոսքային ուսուցման կազմակերպում՝ սովորողների նախասիրություններին և հակումներին համապատասխան | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրապետության առանձին գործող 107 ավագ դպրոցներում և միջնակարգ դպրոցների 3-րդ աստիճանում իրականացվում է հոսքային ուսուցում՝ հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական և ընդ հանուր հոսքերում: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե («Հանրակրթական ուսուցում» ծրագրի գծով նախատեսված գումարների շրջանակում) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 31. | «Ներառական կրթություն» ծրագրի իրականացում 124 դպրոցում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ապահովվել է կրթության մատչելիություն և հավասար պայմաններ, մտավոր և ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող շուրջ 4000 երեխայի կրթությունը կազմակերպվել է հանրա կրթական դպրոցներում: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 2296848.3 հազ. դրամ |
| 32. | Դպրոցական օլիմպիադաների կազմակերպում (16 առարկաներից՝ հանրապետական և 7 առարկայից՝ միջազգային օլիմպիադաների մասնակցություն) | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան | Հանրակրթական դպրոցների աշակերտների համար կազմակերպվել են հանրապետական օլիմպիադաներ 16 առարկայից, իսկ լավագույնները մասնակցել են միջազգային օլիմպիադաների՝ 7 առարկայից: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 59688.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 33. | Դպրոցականների սպարտակիադաների կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթական դպրոցների 73204 աշակերտի համար անցկացվել են ամենամյա հանրապետական սպորտային խաղեր 11 մարզաձևերով: Մարզական խաղերի միջմարզային և հանրապետական փուլերին մասնակցել է 2904 աշակերտ: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 35000.0 հազ. դրամ |
| 34. | Դպրոցականների գեղարվեստական ստեղծագործության փառատոնի կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրապետության բոլոր մարզերում կազմակերպվել են դպրոցականների գեղագիտական ստեղծագործության մրցույթ-փառատոներ, նկարչական հանրապետական ու միջազգային մրցույթներ: | 2015թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 35. | Հանրակրթական դպրոցներում «Առողջ ապրելակերպ» դասընթացի իրականացում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Հանրակրթական դպրոցների 8-11-րդ դասարաններում սովորողների համար անցկացվել են առողջ ապրելակերպի դասընթացներ, սովորողները ձեռք են բերել կյանքի հմտություններ: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե («Հանրակրթական ուսուցում» ծրագրի գծով նախատեսված գումարների շրջանակում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 36. | Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Ամառային ճամբարներում կազմակերպվել են սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 4500 երեխայի ամառային հանգիստը: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ 449730.0 հազ. դրամ |
| 37. | Սովորողների մասնագիտական կողմնորոշման նպատակով համապատասխան մանկավարժ ների վերապատրաստում | Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն | Վերապատրաստում ները նպաստել են մանկավարժների կողմից՝ սովորողների մասնա գիտական կողմնորոշման աջակցության գործընթացի արդյունավետության բարձ րացմանը: | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե («Կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում» ծրագրի գծով նախատեսված գումարների շրջանակում) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 38. | «Երաժշտական և ար-վեստի դպրոցներում ազգային, լարային, փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի իրականացում | ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան | ՀՀ 144 երաժշտական և արվեստի դպրոց-ների ազգային, փո-ղային և լարային նվագարանների բա-ժինների 2361 սովո-րող կստանա ուսման վարձավճարների փոխհատուցում, ինչը կնպաստի գեղար-վեստական կրթութ-յան մատչելիության ապահովմանը, կրթական հաստա-տությունների պահ-պանմանը և մշակույ-թի ոլորտի հետագա մասնագետներով համալրմանը: | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 629 766.0 հազ. դրամ |
| 39. | Հայաստանի Հանրապետությունում շնորհալի պատանի երաժիշտ-կատարողների մասնագիտական կարողությունների զարգացում և կատարելագործում» նպատակային ծրագրի իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Շնորհալի երեխաների բացահայտման և հետագա ուսուցման գործընթացի կազմա-կերպումը կապահովի մասնակիցների պրոֆեսիոնալ աճ և զարգացում, միջազգային ասպարեզում և մշակութային շուկայում հայ կատարողական արվեստի | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 15 926.6 հազ.դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մրցունակության ապահովում: | | |
| 40. | Պատանի ստեղծագոր-ծողների համար մրցույթ-ների, փառատոների, ցուցահանդեսների կազ-մակերպում, այդ թվում՝ «Վերածնունդ» պատանի երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ-փառատոն, «Արևներ» մանկապատանեկան մրցույթ-փառատոն, «Եր-գող Հայաստան», ման-կապատանեկան երգչախմբերի հան-րապետական մրցույթ | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Պատանի ստեղծա-գործողների համար մրցույթների, փառա-տոների, ցուցահան-դեսների կազմա-կերպմամբ կբացա-հայտվեն շնորհալի ե-րեխաներ, որոնց հե-տագա ուսուցման գործընթացում և ստեղծագործական գործունեությանը կցուցաբերվի աջակ-ցություն: | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 8 600.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 41. | Մանկապատանեկան թատրոնների զարգաց-ման նպատակային ծրագրեր, այդ թվում՝ Մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապետա-կան փառատոն, «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային փառատոն | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Մանկապատանեկան թատրոնների «Նռան հատիկ» հանրապե-տական և «Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային միջազգային փառա-տոների անցկացումը կնպաստի մանկա-պատանեկան թատ-րոնի զարգացմանը, շնորհալի երեխանե-րի հայտնաբերմանը և ստեղծագործական գործունեության խթանմանը | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 7 400.0 հազ. դրամ |
| 42. | Մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոն («Աջակցություն մանկապատանեկան միջոցառումներին») ծրագիր | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Փառատոնը կնպաս-տի մանկական կինո-յի զարգացմանն ու հանրահռչակմանը, երեխաների հայրե-նասիրական դաս-տիարակությանը և աշխարհայացքի ընդ-լայնմանը, ժամանցի և հանգստի կազմա-կերպմանը: | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 1 900.0 հազ. դրամ |
| 43. | Պետական աջակցություն հատուկ կարիքներով, սոցիալա-պես անապահով երե-խաներին մշակութային մասնագիտական ուսուց- | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | ՀՀ մշակույթի նախա-րարության «Երեխա-ների հատուկ ստեղ-ծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության արդ- | 2015թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 105 227.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ման և գեղագիտական դաստիարակության ոլորտում՝ արվեստների և արհեստների ուսուցում: | | յունքում Երևանի 5, Վանաձորի 2, Գյումրու 2, Սպիտակի, Գավառի, Ստեփանավանի մասնաճյուղերի գիշերօթիկ հատուկ դպրոցներում հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով ավելի քան 614 երեխաներ կստանան արվեստների և արհեստների ուսուցում: | | |
| 44. | «Դպրոցականի ֆիլհարմոնիա» դասծրագրի իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Ճանաչողական, բացատրական համերգների միջոցով երեխա-ների գեղագիտական դաստիա-րակության, աշխարհայացքի ընդլայնման և վաղվա բարձրաճաշակ ու գրագետ ունկնդրի դաստիարակում: | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 24 071.4 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 45. | «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամի գործունեության իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների և սովորողների մասնագիտական ունակու-թյունների զարգացման նպատակով ուսումնամեթոդական և գործնական աջակցության ցուցաբերում: | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 77 360.9 հազ. դրամ |
| 46. | Մանկական մուլտֆիլմե-րի նկարահանում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Մանկական կինոյի զարգացում | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 111 096.6 հազ. դրամ |
| 47. | «Երեխաների և պատանիների համար գիտաճանաչողական ուղևորությունների կազմակերպում» ծրագ-րի իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակություն և բազմակողմանի զարգացում, արվեստի ճյուղերի հետ շփում | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 8 000.0 հազ. դրամ |
| 48. | «Մենք ենք, մեր մարզը» մանկապատանեկան մարզային մշակույթի օ-րեր մայրաքաղաքում ծրագրի իրականացում | Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն | Շնորհալի երեխանե-րի և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում և խթան- | 2015 թ. ընթացքում | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 900.0 հազ. դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ում | | |
| 49. | Անչափահասների (իրավախախտ, վկա, տուժող) գործեր քննող դատավորների, անչափահասների գործերով զբաղվող դատախազների, քննիչների, անչափահասների գործերով ոստիկանների, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի անձնակազմի և փաստաբանների վերապատրաստումներ (մասնագիտացում) | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Անչափահասների գործերով արդարադատության բնագավառում կլինեն մասնագիտացված տարբեր դերակատարներ (դատավորներ, դատախազներ, քննիչներ, անչափահասների գործերով ոստիկաններ, փաստաբաններ և այլն) | 2015 թ. ընթացքում | օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 50. | Օրենսդրության վերանայում՝ անչափահաս ձերբակալվածներին և կալանավորվածներին արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետները կրճատելու, նրանց նկատմամբ գործերի լուծման արդարադատական միջոցների (diversion) և այլընտրանքային պատիժների կիրառման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն | Իրավախախտում կատարած, հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա անչափահասների համար կմշակվի առավել նպաստավոր օրենսդրություն | 2015 թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 51. | Գործող համայնքային արդարադատության վերականգնողական կենտրոնների աշխատանքների կազմակերպում | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն | Կիրականացվեն կանխարգելման աշխատանքներ իրավախախտ անչափահասների շրջանում | 2015 թ. ընթացքում | Օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 52. | Շարունակել բանակցային գործընթացը պատկան մարմինների պատասխանատուների հետ՝ 12-ից 18 տարեկան իգական սեռի դժվար դաստիարակվող, շեղված վարքագծով և հատուկ դաստիարակության կարիք ունեցող անչափահասների համար վերինտեգրման կենտրոնի ստեղծման նպատակով | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն | Վերականգնողական աշխատանքներ կիրականացվեն վարքի շեղում ունեցող աղջիկների շրջանում | 2015 թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում |
| 53. | ՀՀ տարածքում գործող դպրոցներում կազմակերպել և անցկացնել հանդիպումներ,զրույց-զեկուցումներ | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն | Անչափահասների հանցագործություննե րի թվի նվազում | 2015 թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 54. | Շարունակել ավագ դպրոցներում դպրոցական տեսուչների ծրագրի իրականացումը | Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն | Աշակերտների իրավական գիտելիքների զարգացում, իրավախախտումների կանխարգելում | 2015 թ. ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջում |

ՀԱՎԵԼՎԱԾ N 6

## ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2015 թ. տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5.1 հոդվածին համապատասխան:

2. Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2005 թ. նոյեմբերի 3-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ Ռազմավարության» հիմնական ուղղությունները, ինչպես նաև շահագրգիռ հանրապետական գործադիր մարմինների կողմից ներկայացված առաջարկությունները, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ և Եվրոպայի խորհրդի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հասարակական կյանքում նրանց լիարժեք մասնակցության խթանման ու կյանքի որակի բարելավման 2006-2015 թթ գործողությունների ծրագրի» դրույթները:

### ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**Ծրագրի նպատակն է՝**

3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և նրանց սոցիալական ներառման համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

**Ծրագրի խնդիրներն են՝**

4. հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, սոցիալական ներառման և սոցիալական պաշտպանության հարցերին առնչվող օրենսդրության կատարելագործումը,

5. հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների ապահովումը,

6. բժշկասոցիալական փորձաքննության և հաշմանդամության սահմանման գործընթացում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների կիրառման հենքի ստեղծումը,

7. հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի, բժշկական և սոցիալական սպասարկման կազմակերպումը,

8. հաշմանդամություն ունեցող անձանց կրթության, մասնագիտական ուսուցման կազմակերպումն ու զբաղվածության խթանումը,

9. հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը մարզական և մշակութային ծրագրերում,

10. հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնումը,

11. հասարակության ուշադրության բևեռումը հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վրա:

### III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

12. Հաշմանդամության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և պետական նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը:

13. Շարունակվել են իրականացվել աշխատանքներ 2005 թ. նոյեմբերի 3-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ Ռազմավարության» դրույթների իրականացման ուղղությամբ:

14. 2010 թվականի հոկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած Կոնվենցիայի դրույթներին համապատասխան կատարվում են աստիճանական քայլեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ու օրենսդրական բարեփոխումներին, գործող ծրագրերի խթանմանը, նրանց հիմնախնդիրների լուծման նորովի մոտեցումներին:

15. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հասարակական կյանքում լիարժեք մասնակցության խթանման ու կյանքի որակի բարելավման 2006-2015 թթ գործողությունների ծրագրի» դրույթներին համապատասխան մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կկարգավորի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, բժշկական և մասնագիտական վերականգնման, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովման, նրանց կրթության, աշխատանքային գործունեության, առողջության պահպանման, ինչպես նաև հասարակական կյանքում բոլորի հետ հավասար մասնակցության համար անհրաժեշտ սոցիալական, իրավական և տնտեսական նվազագույն երաշխիքների հետ կապված իրավահարաբերությունները:

16. Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Հայեցակարգն ընդունվել է 2014 թվականի հունվարի 9-ի թիվ 1 արձանագրային որոշմամբ:

Համաձայն վերոնշյալ հայեցակարգի դրույթների՝ ԱՀԿ ֆունկցիաների միջազագային դասակարգումը թարգմանվել է հայերեն լեզվով, որից հետո աշխատանքներ են տարվել այն ազգային դասակարգիչ հաստատելու ուղղությամբ: Իրականացվել են աշխատանքներ հաշմանդամության սահմանման նոր՝ ԱՀԿ ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված չափորոշիչներ մշակելու ուղղությամբ:

17. Լսողության խնդիրներ ունեցող մինչև 18 տարեկան երեխաներին և 18-ից մինչև 30 տարեկան հաշմանդամություն ունեցող երիտասարդներին եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման նպատակով հավաստագրերի տրամադրումը

կանոնակարգելու նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի թիվ 20-Ն և 2013 թվականի փետրվարի 14-ի թիվ 121-Ն որոշումները:

18. Բժշկասոցիալական փորձաքնական մարմինների կողմից իրականացվող աշխատանքներն ավելի թափանցիկ ու վերահսկելի դարձնելու նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատվել է նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների և վերափորձաքննության բաժնի աշխատանքների մոնիթորինգի ու վերափորձաքննության բաժնի հսկողական փորձաքննությունների իրականացման կարգը:

19. Արդիականացվել և կատարելագործվել են հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման «Փյունիկ» և «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների հաշվառման» տեղեկատվական համակարգերը՝ համաձայն համապատասխան տեխնիկական առաջադրանքների:

Արդիականացման արդյունքում վերոնշյալ տեղեկատվական համակարգերը համադրվում են այլ համակարգերի հետ, առցանց տեղեկատվություն են տրամադրում այլ համակարգերի, անձնական տվյալների մուտքագրման դեպքում ինքնաշխատ կերպով տեղեկություն են ստանում հարակից այլ համակարգերից: «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգի» արդիականացման արդյունքում առավել վերահսկելի է դարձել պարագաների տրամադրման գործընթացը, մասնավորապես՝ բացառվում են պարագաների կրկնակի և ժամկետից շուտ տրամադրման հնարավորությունները, հստակեցվել է պարագաների բյուջետային պլանավորման գործընթացը:

Մշակվել և հստակեցվել են ոլորտում իրականացվող ծրագրերի, մասնավորապես՝ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների, այդ թվում նաև աչքի պրոթեզավորման և ձայնաստեղծ սարքերի, լսողական սարքերի, հաշմանդամի սայլակների, բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների տրամադրման, տեսողության խնդիրներ ունեցող հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության և «Խոսող գրքերի» ձայնագրման ծառայությունների իրականացման և դրանց հաշվետվողականության ապահովման կարգերը:

20. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը շարունակում է մնալ սոցիալական ոլորտի դժվար լուծելի հիմնախնդիրների շարքում: Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվառված 193836 հաշմանդամություն ունեցող անձանց 65,9 %-ը աշխատանքային տարիքի են, որոնցից զբաղված է միայն 8-9%-ը: 2013 թ. դեկտեմբերի 11-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք), որը գործողության մեջ է մտել 2014 թ. հունվարի 1-ից, համաձայն որի, եթե հաշմանդամություն ունեցող անձը զբաղված չէ օրենքով սահմանված զբաղվածություն համարվող գործունեության որևէ տեսակով, ճանաչվում է գործազուրկ և ձեռք է բերում գործազուրկի համար օրենքով սահմանված իրավունքները:

Հաշմանդամների զբաղվածության խթանման նպատակով՝ կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, օրենքով սահմանված է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (քվոտա):

2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային կենտրոններում, որպես աշխատանք փնտրող, գրանցված է եղել 1310 հաշմանդամություն ունեցող անձ, իրականացվող ծրագրերում ընդգրկվել են 329-ը, աշխատանքի են ընդունվել 200-ը:

21. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության գործընթացը խթանելու, համայնքի կյանքում նրանց ներգրավելու նպատակով, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի շրջանակներում կատարվել են ուսումնասիրություններ և մշակվել ձեռնարկներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման և նրանց համար աշխատատեղերի հարմարեցման վերաբերյալ: Զբաղվածության տարածքային բոլոր կենտրոններում իրականացվել է հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների վերապատրաստում՝ անձի կարողությունների գնահատման և աշխատատեղերի վերլուծություն իրականացնելու նպատակով:

Փոքր դրամաշնորհների աջակցությամբ 11 սոցիալական ձեռնարկություններում աշխատանքով ապահովվել է 101 հաշմանդամություն ունեցող անձ, մինչև տարվա վերջ՝ սոցիալական 6 ձեռնարկությունում աշխատանքով կապահովվի ևս 65-ը:

Ծրագրի շրջանակներում մասնագիտական կրթություն է ստացել ավելի քան 900, իսկ աշխատանքով ապահովվել է 305 հաշմանդամություն ունեցող անձ:

22. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի աջակցությամբ "Հայաստանի կույրերի միավորում" հասարակական կազմակերպության Էջմիածնի ուսումնաարտադրական կազմակերպությունում և Ճամբարակի "Աստղացոլք" հասարակական կազմակերպությունում գործում են փորձնական սոցիալական կազմակերպություններ: Սոցիալական կազմակերությունների հիմնումը ուղղված է մի կողմից հաշմանդամ անձանց սոցիալական խնդիրների լուծմանն ու նրանց համար հնարավորինս հավասար պայմանների ապահովմանը, մյուս կողմից նրանց աշխատանքային ներուժը հասարակությանը ի շահ ներդնելուն:

23.«Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվում է Գյումրի քաղաքի աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ունակությունների վերականգնման, մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ:

24.«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Հանրակրթության մասին», «Կրթության մասին» և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքները կանոնակարգում են հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կրթության հարցերը:

25. 2013/2014 ուսումնական տարում շարունակվել են աշխատանքները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք անձանց համար նախատեսված միջոցառումների իրականացման և ներառական կրթության ընդլայնման ուղղությամբ.

1) Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից (ներառյալ մասնաճյուղերը) 2013 թվականի ընթացքում իրականացվել է շուրջ 5000 երեխայի կրթական կարիքների բացահայտում և գնահատում, նրանց հանրակրթությունը կազմակերպելու նպատակով, թերևս, հատկանշական է, որ այս գործընթացի հիմքում ընկած են ԱՀԿ ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքներն ու մոտեցումները:

2) 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորել են թվով 2300 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ,

3) 2013/2014 ուսումնական տարում հանրապետության 115 ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորել են 2600 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ,

4) ապահովվել է անվճար հիմունքներով կրթությունը միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, առնվազն անցումային միավոր ստացած հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև ուսման ընթացքում հաշմանդամ դարձած անձանց համար,

5) մշակվել, տպագրվել և ձեռք են բերվել ուսումնամեթոդական ձեռնարկներ ու այլ ուսումնական նյութեր՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար: Ուսումնաօժանդակ գրականությունը տրամադրվել է հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներին:

26. Շարունակվել և իրականացվում են հասցեական ծրագրեր՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խնդիրների լուծմանն ու սոցիալական ներառմանը:

1) 2013 թվականի ընթացքում տրամադրվել է 12615 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագա, որից՝ վերին և ստորին վերջույթների պրոթեզներ՝ 880, միոպրոթեզներ՝ 13 հատ, օրթեզներ՝ 333, սեղմիրան՝ 683, աղեկապ՝ 249, սուպինատոր՝ 610, ռեկլինատոր՝ 15, հենակ՝ 1046, ձեռնափայտ՝ 483, օրթոպեդիկ կոշիկ՝ 1303.5, պրոթեզի կոշիկ՝ 1980, կրծագեղձի պրոթեզ՝ 642, գուլպաներ, ձեռնոցներ՝ 3140, սիլիկոնե գուլպա՝ 64 հատ, փոքր տրամաչափի սայլակ 5, քայլակ 153, կատարվել է պարագաների վերանորոգում՝ 682 հատ, ձայնաստեղծ սարք ստացել է 80 հաշմանդամ, 130 հաշմանդամի կատարվել է աչքի պրոթեզավորում:

2) Տրամադրվել են՝ 1210 լսողական սարք (որից՝ 108-ը եվրոպական արտադրության), 36 հավաստագիր՝ եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար, լսողական սարքի ներդիրներ՝ 200 հատ /100 երեխա/, հաշմանդամի սայլակ՝ 373 հատ:

3) Միջազգային և հասարակական կազմակերպությունների միջոցով 2013 թվականին մինչև 12 տարեկան 119 երեխայի տրամադրվել է 222 հատ /OTIKON և SIEMENS ֆիրմաների թվային լսողական սարքեր:

4) Շարունակվել և իրականացվում է տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ տառատեսակներով /Բրայլյան/ գրքերի տպագրության, տետրերի պատրաստման, «Խոսող գրքերի» ձայնագրության ծրագիրը, որը նշված անձանց հնարավորություն է տալիս կարդալու, գրելու, ինտեգրվելու հասարակությունը:

5) Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնումն իրականացվել է «Արթմեդ» բուժվերականգնողական կենտրոնում, ինչպես նաև Միջազգային Կարմիր Խաչի հետվնասվածքային վերականգնողական, Գյումրու վերականգնողական, Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական կենտրոններում, «Օշական» մանկական վերականգնողական կենտրոնում, «Արարատ» մոր և մանկան կենտրոններում և այլ կազմակերպություններում:

«Արթմեդ» բուժվերականգնողական կենտրոնում հիվանդանոցային պայմաններում բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնման ծառայություն են ստացել 979 հաշմանդամություն ունեցող և սոցիալապես անապահով անձ:

27. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության բնագավառում կարևոր տեղ ու դեր ունի նրանց խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների համակարգը:

Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը և սոցիալական սպասարկումն իրականացվում է ինչպես շուրջօրյա խնամքի հաստատություններում, այնպես էլ տնային պայմաններում:

Հոգեկան առողջության ոլորտում համայնքահեն ծառայությունների ներդրման, ստեղծման ու պահպանման, առկա կարողություններն ու ներուժի հզորացման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական

ծառայությունների տրամադրմանն առնչվող իրավական հիմքերի մշակման նպատակով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նախատեսել է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության աջակցությամբ իրականացնել այլընտրանքային ծառայությունների մոդելների, համապատասխան չափորոշիչների մշակման աշխատանքներ: Նույն նպատակով հստակ ծրագրերի նախագծեր են քննարկվում «Քրոնիմեդ» և այլ կազմակերպությունների հետ:

Անկողնային հիվանդների խնամքի ու սոցիալական սպասարկման անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2014 թ. հունիսի 12-ի N609-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում անկողնային խնամք ստացող անձանց սպասարկման նպատակով կառուցվելիք նոր մասնաշենքի շինարարական աշխատանքների իրականացում» դրամաշնորհային ծրագիրը: Ծրագրի մեկնարկը տրվել է ս.թ. հուլիսի 28-ին: Ծրագրի ավարտը նախատեսված է 2015 թ. հուլիսին: Արդյունքում կունենանք նոր կառուցված, կահավորված և անհրաժեշտ սարքավորումներով հագեցած խնամքի հաստատություն:

Կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ծառայություններ տրամադրող համայնքային ցերեկային կենտրոնների գործունեությունը՝ պետական աջակցություն է ցուցաբերվում «Առաքելություն Հայաստան», «Հույսի կամուրջ» և «Փրկություն» հասարակական կազմակերպություններին:

28. Շարունակվել են Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ աշխատանքները: Հանձնաժողովի նիստերի ընթացքում Երևան քաղաքի և մարզային հանձնաժողովների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկվել են տեղերում իրականացվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ հարցերը, ներկայացվել համապատասխան առաջարկություններ: Ներկայացվել է հաշմանդամության սահմանման նոր մոդելի և նրա իրականացման ուղղությամբ կատարված ու կատարվելիք աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը, քննարկվել են նաև հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնմանն ուղղված այլ հարցեր:

29. Հաշմանդամության հիմնախնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացման նպատակով հեռուստատեսությամբ պարբերաբար հարցազրույցներ են տեղի ունեցել ոլորտում պատասխանատու, նախարարության տարբեր աշխատակիցների հետ, ցուցադրվել հասարակական կազմակերպությունների պատրաստած սոցիալական տեսահոլովակներ:

30. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սերտ համագործակցում է այլ հանրապետական գործադիր մարմինների, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

## IV. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

31. 2015 թ. իրականացվելու են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման և կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

32. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում 2015 թ. տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները բխում են այդ անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունից, հասարակություն ինտեգրելու, նրանց համար հնարավորինս հավասար պայմաններ ստեղծելու և հավասար հնարավորություններ ապահովելու,

բժշկական, սոցիալական և մասնագիտական վերականգնողական գործընթացն առավելագույնս արդյունավետ իրականացնելու, հաշմանդամություն ունեցող երեխաների ներառական կրթության ու հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

33. Շարունակվելու են աշխատանքները հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները կանոնակարգող ազգային օրենսդրությունը ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես, շարունակվելու են աշխատանքները հաշմանդամության սահմանման և բժշկասոցիալական փորձաքննության անցկացման այնպիսի մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ, որոնք կապահովեն անձի կարիքներին և կարողություններին համարժեք հասցեական, համալիր և արդյունավետ ծառայությունների մատուցումը՝ բարձրացնելով դրանց ծախսարդյունավետությունը:

34. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ու պաշտպանությանն ուղղված 2015 թվականի համար նախատեսված միջոցառումներն իրականացվելու են 11 հիմնական ուղղություններով:

**Ցանկ**
**հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ու պաշտպանությանն ուղղված 2015 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների**

| N/N | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Ակնկալվող արդյունքը | Կատար ման ժամկետ ը | Ֆինանսավորման չափը և աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| | Հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրման ապահովում | | | | |
| 1.1 | Ոլորտը կանոնակարգող ազգային օրենսդրությունը ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխանության ապահովում: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրմանն ուղղված իրավական ակտերի առկայություն: | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 1.2 | Հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրման շրջանակներում Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշման-դամության սահմանմանման շափորոշիչների փորձնական կիրառում և լրամշակում: Համապատասխան վերապատրաստումների նախապատրաստում և կազմակերպում: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՖՄԴ սկզբունքների վրա հիմնված հաշման-դամության սահմանմանման շափորոշիչների փորձնական կիրառման արդյունքների վերլուծություն: Լրամշակված չափորոշիչներ: Համապատասխան վերապատրաստումների համար փաթեթների | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | /մոդուլների/ առկայություն: | | |
| 1.3 | Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար այլընտրանքային ծառայությունների ստեղծման, առկա կարողություններն ու ներուժի հզորացման, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական ծառայությունների տրամադրմանն առնչվող իրավական հիմքերի մշակում: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար այլընտրանքային ծառայությունների մոդելների, համապատասխան չափորոշիչների առկայություն: | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 1.4 | Վերականգնողական ծառայությունների հասցեականությունը բարձրացնելու և արդյունավետությունը ապահովելու նպատակով օրենսդրական դաշտի կատարելագործում: | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Լրամշակված իրավական ակտերի առկայություն: | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| **2.** | **Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում** | | | | |
| 2.1 | Հասարակական, արտադրական և բազմաբնակարան բնակելի շենքերի ճարտարապետահատակագծային առաջադրանքների կազմման, նախագծերի մշակման, փորձաքննության և դրանց համաձայնեցման փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների նկատմամբ վերահսկողություն | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի համար սահմանված քաղաքաշինական նորմերի պահանջների կատարում | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.2 | Հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար նախատեսված սարքավորանքների /թեքահարթակներ կամ հատուկ վերելակային հարմարանքներ/պատրաստում, ձեռքբերում և մայրաքաղաք ներկրված քաղաքային ավտոբուսների վրա դրանց տեղադրման աշխատանքների իրականացում | Երևանի քաղաքապետարան Տեղական ինքնակառավարման մարմիններ /համաձայնությամբ/ | Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու հնարավորության ապահովում | Տարվա ընթացքում | Երևան համայնքի բյուջե<br><br>Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե |
| 2.3 | Քաղաքային նշանակության քաղաքաշինական օբյեկտներում, կառուցվող շենքերում, փողոցներում,մայթերում թեքահարթակների կառուցում | Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Բնակչության սակավաշարժ խմբերի համար հավասար և մատչելի պայմանների ապահովում | Տարվա ընթացքում | Երևան համայնքի բյուջե |
| 2.4 | Մայրաքաղաքի ներքաղաքային երթուղիներում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոբուսների ուղեսրահներում գովազդային մոնիտորների տեղադրում՝ կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարման և դրանց գրառման ապահովման համար | Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովում | Տարվա ընթացքում | Երևան համայնքի բյուջե |
| 2.5 | Ճարտարապետահատակագծային առաջադրանքներ նախապատրաստելիս իբրև պարտադիր պահանջ կառուցապատողներին հանձնարարել հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց | Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Բնակչության սակավաշարժուն խմբերի համար հավասար և մատչելի պայմանների | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.4 | [illegible] հաստատությունների ընդունելության ժամանակ վճարովի համակարգի համար սահմանված անցումային միավորներ ստանալու դեպքում 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև հաշմանդամ երեխաների համար [illegible] | ՀՀ ԿԳՆ | [illegible] խմբի և "հաշմանդամ երեխա" կարգավիճակ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց պետական պատվերի շրջանակներում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /շուրջ 192,744.2 հազ.դրամ/ |
| **3.** | **Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և մասնագիտական ուսուցման ծրագրեր** | | | | |
| 3.1 | [illegible] և/կամ/ հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում | ՀՀ ԿԳՆ | Շուրջ 3000 երեխայի ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /206,072.5 հազ.դրամ/ |
| 3.5 | Հատուկ կրթության ոլորտում դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակում և հրատարակում | ՀՀ ԿԳՆ | Հատուկ կրթության կարիք ունեցող հաշմանդամներին ուսումնական ձեռնարկներով ապահովում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /16000.0 հազ.դրամ/ |
| 3.2 | Հանրապետության 138 հանրակրթական դպրոցում ներառական կրթության կազմակերպում, որից 14-ը՝ Տավուշի մարզում [illegible] | ՀՀ ԿԳՆ, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Շուրջ 3997 երեխայի համար ներառական կրթության կազմակերպում, որից՝ 331-ը Տավուշի մարզում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե՝ /2,509,690.4 հազ. դրամ/ ներառական կրթության ծրագրի շրջանակներում, որից՝ 212,842.1 հազ. դրամ՝ Տավուշի մարզում |
| 3.6 | Հաշմանդամություն ունեցող երիտասարդների ընդգրկում Գեղեցիկ արվեստների ակադեմիայի կրթական ուսուցման ծրագրերում /գրաֆիկական [illegible] | Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական [illegible] | Տարվա ընթացքում | Երևանի համայնքի բյուջե |
| 3.3 | Հատուկ կրթության կազմակերպում 23 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում | ՀՀ ԿԳՆ, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապե-տարան /համաձայնությամբ/ | Հատուկ կրթության կարիք ունեցող շուրջ 2321 երեխայի կրթության կազմակերպում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /3,409,046.5 հազ.դրամ/ |
| **4.** | **Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրեր** | | | | |
| | | | | | |
| 4.1 | Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում կընդգրկվի հաշմանդամություն | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /44 200.0 հազ.դրամ/ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| .7 | Աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու համար աջակցության տրամադրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 260 անձ Ծրագրի շրջանակներում կընդգրկվի հաշմանդամություն ունեցող 10 անձ | | ՀՀ պետական բյուջե /1 000.0 հազ. դրամ/ |
| 4.2 | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում կընդգրկվի հաշմանդամություն ունեցող 226 անձ և 112 ուղեկցող | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /159 480.0 հազ. դրամ/ |
| 4.8 | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում կընդգրկվի հաշմանդամություն ունեցող 50 անձ | | ՀՀ պետական բյուջե /2 700.0 հազ.դրամ/ |
| 4.3 | Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում կընդգրկվի հաշմանդամություն ունեցող 6 անձ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /9 342.0 հազ. դրամ/ |
| 4.9 | Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մասնակցության խթանմանն ուղղված նոր ծրագրերի մշակում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հ/կ-ներ | Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մասնակցության խթանմանն ուղղված նոր ծրագրերի փաթեթի առկայություն | Տարվա ընթացքում | Դոնոր կազմակերպություններ |
| 4.4 | Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում կընդգրկվի հաշմանդամություն ունեցող 78 անձ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /24 454.1 հազ. դրամ/ |
| 4.10 | ՀՀ կույրերի և խուլերի միավորումների առկա ռեսուրսների, կարիքների, զարգացման հեռանկարների ուսումնասիրություն, առաջարկությունների մշակում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հ/կ-ներ | ՀՀ կույրերի և խուլերի միավորումների կարիքների հզորացման համար առաջարկությունների փաթեթի առկայություն | Տարվա ընթացքում | Դոնոր կազմակերպություններ |
| 4.5 | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում կընդգրկվի հաշմանդամություն ունեցող 23 անձ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /22 778.8 հազ. դրամ/ |
| 4.11 | «Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ունակությունների վերականգնման, մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 540 հաշմանդամություն ունեցող անձի՝ ուսուցողական, խորհրդատվական և աշխատանքի վերականգնման ծառայությունների տրամադրում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 19 936.4 հազ. դրամ |
| 4.6 | Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ծրագրի շրջանակներում կընդգրկվի 333 հաշմանդամություն ունեցող անձ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /103 500.0 հազ. դրամ/ |
| | | | | | |
| **5.** | **Հաշմանդամություն ունեցող անձանց** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5.5 | [illegible] դեռահասների և երիտասարդների ցերեկային խնամքի սոցիալ-վերականգնողական ծառայություններ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն "Փրկություն" Հ/Կ /համաձայնությամբ/ | Մտավոր խնդիրներ ունեցող 50 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկման ցերեկային կենտրոնում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /24 աշխատողի աշխատավարձի վճարում/ /23 216.8 հազ. դրամ/ |
| 5.1 | Տուն ինտերնատներում տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման իրականացում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են տուն ինտերնատներում խնամվողների շուրջ 60 %/ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 630 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական շուրջօրյա խնամքի և սպասարկման կազմակերպում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /1 040 046.7 հազ. դրամ/ |
| 5.6 | Առավել կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում | Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական աջակցության միջոցով սոցիալական վիճակի բարելավում | Տարվա ընթացքում | Երևան համայնքի բյուջե |
| 5.2 | Տնային պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում / հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 30%-ը / | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Շուրջ 415 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական կարիքի բավարարում, սպասարկման կազմակերպում տնային պայմաններում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /36 896.0 հազ.դրամ/ |
| 5.7 | 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց ներքաղաքային էլեկտրատրանսպորտով անվճար երթևեկելու համար [illegible] տրամադրում | Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն | 1-ն և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց ներքաղաքային էլեկտրատրանսպորտով անվճար երթևեկելու իրավունքի ապահովում | 2015 թվականին | «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի տարեկան աշխատանքների ծավալի շրջանակներում /200.0 հազ. դրամ/ |
| 5.3 | Խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում Վարդենիսի նյարդահոգեբուժական տուն-ինտերնատին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 50 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկում ցերեկային կենտրոնում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /17 778.4 հազ.դրամ/ |
| 5.4 | Տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում ծեր և հաշմանդամություն ունեցող քաղաքացիների սոցիալական սպասարկման ծառայությունների տրամադրում /հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են սպասարկվողների շուրջ 30 %-ը/ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն "Առաքելություն Հայաստան" ԲՀԿ /համաձայնությամբ/ | 1350 հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական սպասարկում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /51 718.5 հազ. դրամ/ |
| **6.** | **Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող բժշկական օգնության, այդ թվում վերականգնողական ծրագրեր.** | | | | |
| 6.1 | Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության [illegible] ծրագրերի իրականացում | ՀՀ առողջապահության նախարարություն | Հաշմանդամություն ունեցող անձանց [illegible] բժշկական օգնության սպասարկում, այդ թվում նաև վերականգնողական ծառայությունների | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե 6.8 մլրդ դրամ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6.5 | Հաշմանդամություն ունեցող անձանց համար վերականգնողական օգնության ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ստացում և ամփոփում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Վերականգնողական ծառայությունների համակարգված կազմակերպում, վերականգնողական [illegible] | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 6.2 | 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց և հաշմանդամ երեխաներին [illegible] | ՀՀ առողջապահության նախարարություն | Հաշմանդամություն ունեցող անձանց [illegible] դեղորայքով ապահովում՝ ըստ դիմելիության | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /«Բնակչության առողջության առաջնային պահպանման» ծրագրի շրջանակներում շուրջ 1.0 մլրդ դրամ/ |
| **7.** | **Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական, տեխնիկական և այլ օժանդակ միջոցներով ապահովման ծրագրեր.** | | | | |
| 6.3 / 7.1 | Հաշմանդամություն ունեցող անձանց [illegible] պարագաներով ապահովում, դրանց վերանորոգում, այդ թվում՝ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Հաշմանդամություն ունեցող շուրջ 10 [illegible] շուրջ 1800 [illegible] պարագաներով, ձայնաստեղծ սարքերով, աչքի պրոթեզներով և լսողական սարքի ներդիրներով | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /«856 347.0 հազ. դրամ/ [illegible] օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում 217 607.3 հազ. դրամ |
| 6.4 | Հաշմանդամություն ունեցող անձանց | ՀՀ աշխատանքի և | 1013 [illegible] ապահովում | Տարվա | ՀՀ պետական բյուջե 182 311.4 հազ. դրամ/ |
| 7.1.1 | [illegible] վերականգնման աշխատանքների կազմակերպում և իրականացում «ԱՐԹՄԵԴ» ԲՎԿ-ում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հաշմանդամություն ունեցող 80 [illegible] | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /27 680.0 հազ. դրամ/ |
| 7.1.2 | Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար աչքի պրոթեզավորման իրականացում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 170 հաշմանդամություն ունեցող անձի աչքի պրոթեզով ապահովում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /11 050.0 հազ. դրամ/ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7.3 | 12-18 տարեկան երեխաներին և 18-30 տարեկան հաշմանդամություն ունեցող երիտասարդներին եվրոպական | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Լսողության խանգարում ունեցող 110 անձի /200 | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /16 000. 0 հազ. դրամ/ |
| 7.2 | Հաշմանդամություն ունեցող անձանց արտադրության լսողական սարքերի ականջակալներով և լսողական սարքերով ձեռքբերման համար հավաստագրերով ապահովում, այդ թվում ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 1850 անձի լսողական հավաստագիր/ սարքերով, լսողական սարքի ականջակալներով և ձեռքբերման համար լսողական սարքերի հավաստագրերով ներդիրներով ապահովում ապահովում, այդ թվում՝ | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /85 650.0 հազար դրամ / |
| 7.2.1 | Հաշմանդամություն ունեցող անձանց ականջակալներով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 450 հաշմանդամություն ունեցող անձի ականջակալներով ապահովում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /41 850.0 հազ. դրամ/ |
| 7.4 | Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ /Բրայլյան/ տառատեսակով գրքերի, տետրերի, բյուլետենների տպագրում և "Խոսող գրքերի" ձայնագրում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 74400 թերթ ՀԿՄ օրգան ամենամսյա “Բյուլետեն” 42327 թերթ Բրայլյան գրքի տպագրություն, 320 հատ Բրայլյան տետրի պատրաստում, “Խոսող գիրք” 1600 ժամ տևողությամբ ձայնագրում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /10 506.4 հազ. դրամ/ |
| 7.2.2 | Հաշմանդամություն ունեցող անձանց և տարիքային կենսաթոշակառուներին ԱՊՀ երկրների արտադրության լսողական սարքերով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Լսողության խանգարում ունեցող 1000 անձի լսողական սարքով ապահովում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /39 000. 0 հազ. դրամ/ |
| 7.5 | Միայնակ մայրերի հաշմանդամություն ունեցող երեխաների համար վերականգնողական ծրագրերի իրականացում /հիպոթերապիա, հիդրոթերապիա/ | Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնում | Տարվա ընթացքում | Երևան համայնքի բյուջե |
| 7.2.3 | Մինչև 12 տարեկան երեխաներին լսողական սարքի ներդիրներով ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | 200 երեխայի /400 ներդիր/ լսողական սարքի ներդիրներով ապահովում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /4 800.0 հազ. դրամ/ |
| **8.** | **Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրումը հասարակական մշակույթի և սպորտի միջոցով** | | | | |
| 7.2.4 | Լսողության խանգարում ունեցող մինչև 18 տարեկան երեխաներին լսողական սարքերով ապահովում /OTIKON, FONAK, SENSEI,SAFARI ֆիրմաների/ և FM համակարգ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Հավատ» հ/կ /համաձայնությամբ/ | Շուրջ 140 երեխայի լսողական սարքերով և FM համակարգով ապահովում | Տարվա ընթացքում | «Հովարդ Կարագյոզյանի հիշատակին» և «Լույսի շող» բարեգործական հիմնադրամներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8.1 | Պետական աջակցություն «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությանը, «Հայաստանի կույրերի միավորում» հասարակական կազմակերպությանը, «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպությանը, «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» հասարակական կազմակերպությանը | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն | Հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /9.000.0 հազար դրամ/ |
| 8.2 | «Հաշմանդամ երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի Երևանի, Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի մասնաճյուղերում գեղագիտական, արհեստագործության ուսուցման ծրագրերի իրականացում | ՀՀ մշակույթի նախարարություն | Հաշմանդամություն ունեցող երեխաների համար արվեստի և արհեստների անվճար ուսուցում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /105.227.0 հազ. դրամ/ |
| 8.3 | «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի իրականացում /Լոռու, Շիրակի մարզեր/ «Երևանի Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ | ՀՀ մշակույթի նախարարություն Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Տեղաշարժման դժվարություն և հաշմանդամություն ունեցող անձանց համար գրադարանային սպասարկում տնային պայմաններում | Տարվա ընթացքում | ՀՀ պետական բյուջե /774.0 հազ.դրամ/ |
| 8.4 | Հաշմանդամություն ունեցող երեխաների համար այցելությունների կազմակերպում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպություններ | Երևանի քաղաքապետարան /համաձայնությամբ/ | Ինտեգրումը հասարակություն մշակույթի միջոցով: | Տարվա ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 8.5 | Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառման նպատակով սպորտային և մշակութային տարաբնույթ ծրագրերի, միջոցառումների, | Երևանի քաղաքապետարան, /համաձայնությամբ/ | Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ներառումը | Տարվա ընթացքում | Երևան համայնքի բյուջե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | սպարտակիադաների իրագործում, ցուցահանդեսների կազմակերպում | | հասարակություն մշակութային և սպորտային միջոցառումների միջոցով | | |
| **9.** | **Սոցիալական գործընկերություն հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերով զբաղվող պետական և հասարակական կազմակերպությունների միջև** | | | | |
| 9.1 | Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողով, հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող կազմակերպություննե ր | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման գործընթացի խթանում | Տարվա ընթացք ում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 9.2 | Հաշմանդամություն ունեցող անձանց մարզային հանձնաժողովների աշխատանքների համակարգում | Հաշմանդամություն ունեցող անձանց հար-ցերով զբաղվող ազգային հանձնաժողով | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման գործընթացի խթանում | Տարվա ընթացք ում | Ֆինանսավորում չի պահանջվում |
| 9.3. | Հաշմանդամություն ունեցող անձանց | ՀՀ աշխատանքի և սո- | Հաշմանդամություն | Տարվա | Ֆինանսավորում չի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին և կազմակերպվող միջոցառումներին մասնակցություն, համատեղ միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև աջակցություն /խորհրդատվության, տեղեկատվության, մեթոդական աջակցության տրամադրում/: | ցիալական հարցերի նախարարություն, Հաշմանդամություն ունեցող անձանց հար-ցերով զբաղվող ազգային հանձնաժողով | ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական ներառման գործընթացի, պետական և հասարակական կազմակերպություններ ի միջև համագործակցության խթանում | ընթացք ում | պահանջվում |
| **10.** | **ԲՍՓ ձևաթղթերի տպագրության ծառայությունների իրականացում** | | | | |
| 10.1 | ԲՍՓ ձևաթղթերի տպագրության ծառայությունների իրականացում | ՀՀ աշխատանքի և սո-ցիալական հարցերի նախարարություն | ԲՍՓ գործընթացի իրականացման համար ձևաթղթերով ապահովում | Տարվա ընթացք ում | ՀՀ պետական բյուջե /4 123.2 հազ. դրամ/ |
| **11.** | **Հանրային իրազեկում** | | | | |
| 11.1 | Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, նրանց համար հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված միջոցառումների, քննարկումների, կլոր սեղանների կազմակերպում և իրականացում: | Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժո-ղով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ինտեգրում | Տարվա ընթացք ում | Դոնոր կազմակերպություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետա-րաններ /համաձայնությամբ/ | | | |
| 11.2 | Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուսաբանում, գրքույկների, մեթոդական ուղեցույցների տպագրում, հեռուստահաղորդումների կազմակերպում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, հասարակական կազմակերպություննե ր /համաձայնությամբ/ | Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկության բարձրացում | Տարվա ընթացք ում | ՀՀ պետական բյուջե /«Հանրային իրազեկ-ման միջոցառումներ» ծրագրի շրջանակում/, դոնոր կազմակերպություններ |
| 11.3 | /www.disabilityarmenia.am/ կայքում հաշմանդամության ոլորտում իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ապահովում | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների և դրանց հնարավոր լուծումների համալիր ներկայացում, հասարակության իրազեկության բարձրացում | Տարվա ընթացք ում | Ֆինանսավորում չի պահանջվում |